№ 179 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 19

1906

ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 19 № 179

ԵՐԵՍՈՒՆԶՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յուլիսի 1-ից
ԲԱՑՎԱԾ Է
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ „ՊՕՂՈՍԵԱՆՆԵՐԻ“
Արմենակի-բազար տուն Զուբալաձէի 2-րդ յարկ

վաճառվում են ամեն տեսակ մանուֆակտուրային ապրանքներ մեծ քանակութեամբ և Թոփով շատ մատչելի գներով:

առ (2. Հ.) 2—2

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յայտարարում է, որ Պուշկինեան գրադարանում (Ալէքսանդր. այգի, Գեօրգիեւսկայա փող. №4) ծախու են դրված 20 հատ պահարաններ, որոնք պատրաստված են քաղաքային արհեստանոցներում: Պահարանների գինն է 30 ր.:

(առ.) 1—1

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Էջմիածնի Գէորգեան ճեմարանի համար հրաւիրւում է մի երաժիշտ-խմբապետ. ցանկացողները թող հաճեն դիմել Էջմիածին:

Տեսուչ՝ Մեսրոպ վարդապետ

(առ.) 2—3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ազգային կալուածները. Վերջին տեղեկութիւններ. Շարժումներ և հետեւանքներ. Գագիկ Թագաւորի արձանը. Թիֆլիսի ընտրութիւնները. Գործնական մարդկանց կարծիքը. Բագուի կեանքից. Պարսից հիւպատոսը Բաթումում. Տօնահանդէս ի պատիւ Դալի Ալիի. Կենտրոնական ժողովին. Շուրջ Բալտեան երկրի վիճակը. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Ֆրանսիան և պապը.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Կաթողիկոսանան շնորհներ:

ԱԶԳԱՅԻՆ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԸ

I

Ի՞նչ վիճակ է սպասում մեր եկեղեցական կալուածներին հողային բարեփոխութեան ծրագիրները իրագործելու ժամանակ:

Դա ժամանակից հերթական, կարեւոր խնդիրներից մէկն է մեզ համար:

Այդ խնդիրը երկու ձեւով է դրված մեր առաջ:

Նախ՝ պէտք է նրան պարզել և վճռել Պետական Դումայի կամ ընդհանուր պետական գաղափարի տեսակէտով, իսկ երկրորդ՝ մեր ներքին հանգամանքները նկատի ունենալով:

Պետական Դուման հողային հարցերի մասին դեռ որոշումներ չէ կայացրել, բայց քաղաքական խոշոր կուսակցութիւնները, որոնք առիթ են ունեցել իրանց կարծիքները արտայայտելու թէ իրանց ծրագիրներում և թէ ուրիշ ազդարարութիւնների մէջ, ընդհանրապէս տրամադրված են վանքական կալուածների վրա նայել այնպէս, ինչպէս պետական հողերի վրա, ուստի և ծառայեցնել նրանց ձրիապէս գիւղական պէտքերի համար:

II

Մենք առիթ ունեցանք այդ հարցի մասին արտայայտել մեր հայեցակէտը Թիֆլիսի պատուիրակների ժողովում և ցոյց տալ, որ մեր եկեղեցական կալուածների վերաբերմամբ անհրաժեշտ է հետեւեալ սկզբունքը ընդունել:

Պետութեան կամ Պետական Դումայի և մեր եկեղեցական կալուածների մէջ կայ մի մարմին, որի գոյութիւնը պէտք է անպատճառ ուշադրութեան առնվի:

Այդ մարմինը հայ ժողովուրդը, հայ ազգն է:

Եկեղեցական կալուածները պատկանում են ազգին, որը գործադրում է նրա արդիւնքները ընդհանուր նպատակների, օրինակ դպրոցների ապահովութեան համար:

Հայոց եկեղեցական կալուածները այդպիսով չեն մտնում վանքական կոչված հողերի շարքը և եթէ նոյն իսկ նկատվեն իբրեւ վանքական հողեր, նրանք նախ և առաջ պէտք է անցնեն այն մարմին, որ վանքերի տէրն է, այն է հայ ազգին:

Այդպէս նայելով հայ եկեղեցական կալուածների վրա, մենք հանում ենք իրանց վանքական հողերի ընդհանուր ցուցակից:

III

Հանելով հայ եկեղեցական կալուածները վանքական հողերի ընդհանուր ցուցակից, մենք պարտաւոր ենք նրանց վերաբերութեամբ որոշ հայեցակէտ մշակել և պարզել, թէ ինչ եղանակով պէտք է այդ հողերի վրա ապրող գիւղացիները գոհացում ստանան և թէ ինչպէս պէտք է շահագործել այն բոլորը, ինչ որ իսկոյն չէ յանձնվում ժողովրդին:

Հայ եկեղեցական կալուածների վրա կարելի է նայել կամ իբրեւ բարեգործական և կուլտուրական նպատակների ծառայող սեփականութեան, կամ մասնաւոր հողատիրութեան վրա:

Յեղափոխական կուսակցութիւնների տեսակէտով բոլորովին միեւնոյնն է, թէ ինչ տեսակ հողատիրութիւն է այդտեղ: Նրանց կարծիքով, պէտք է բոլորը բռնի ուժով խլվի և տրվի ամբողջ ժողովրդին առանց որեւէ վարձատրութեան:

Այդ տեսակէտով մենք ոչինչ անելիք չունենք մեր եկեղեցական կալուածների վերաբերութեամբ, մի անգամից պէտք է ձեռք քաշենք բոլոր եղածից և յետ կանգնենք:

IV

Ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը, որ ցանկանում է իր որոշումները անցկացնել Պետական Դումայի միջոցով, մասնաւոր կալուածների վերաբերութեամբ սահմանել է արդար վարձատրութեան սկզբունքը: Նա վանքական հողերը յանձնում է ժողովրդին առանց վարձատրութեան: Բայց եթէ որոշվի, որ հայ եկեղեցական հողերը չեն պատկանում վանքական հողերի շարքին և որ նրանց տէրը հայ ազգն է, այն ժամանակ այդ հողերի վերաբերութեամբ նոյնպէս պէտք է դրվի վարձատրութեան հարցը, և այդ վարձատրութիւնը պէտք է տայ պետութիւնը, ինչպէս նա պարտաւոր է տալ այն բոլոր հողերի համար, որոնք կը տրվեն գիւղացիներին ձրիապէս:

Այդ վարձատրութիւնը մանաւանդ ընդունելի պէտք է համարվի այն պատճառով, որ նա ծառայելու է կրթական և ուրիշ կուլտուրական նպատակների համար, որոնք յամենայն դէպս աւելի գերադասելի պէտք է ճանաչվեն, քան մասնաւոր կալուածատէրերի վարձատրութիւնը:

Դա տրամաբանական է և արդարացի:

V

Ինչ վերաբերում է այն հողերին, որոնք անմիջապէս չեն գտնվում գիւղացիների տրամադրութեան տակ, օրինակ անտառներ, նրանք պէտք է շահագործվեն իբրեւ մասնաւոր տնտեսութիւն, և ստացված արդիւնքները պէտք է ծառայեն նոյն կրթական-կուլտուրական նպատակներին:

Անշուշտ, հաճելի կը լինէր ձեռք վերցնել բոլոր հողերից և հեռանալ առանց որեւէ հաշիւների, բայց ո՞վ իրաւունք ունի այդպէս վարվել այն կալուածների համար, որոնցով պէտք է պահվեն մեր ժողովրդի կուլտուրական հաստատութիւնները:

Եթէ մի ժամանակ յեղափոխութեան կոհակները կը խլեն ամեն բան բոլոր հողատէրերի ձեռքից, դա ուրիշ խնդիր է: Այն ժամանակ ընդհանուրի մէջ կուլ կը գնան և հայ ազգային կալուածները. բայց այն ժամանակ էլ անշուշտ կը մշակվեն միջոցներ ապահովելու այն կուլտուրական կարիքները, որոնց համար ծառայում էին ազգային կալուածները:

Յեղափոխութեան անելիքը մեր հաշուի մէջ չէ կարող մտնել: Նա կունենայ իր սեփական տրամաբանութիւնը:

Մենք աչքի առաջ ունենք պարլամենտական եղանակով որոշումը:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուշուց, օգոստոսի 16 ից, հետեւեալն են հեռագրում «Մշակ» լրագրին.

Ամսիս 16-ին իշխան Ուցմիեւը, Ջավադ-աղա Ջիվանշիրը և Ահմէդ-բէկ Աղաեւը, որոնք գաւառի միւսիւլման հասարակութեան ներկայացուցիչներն են, ժամանեցին Շուշի, որպէս զի իրանց ստանձնած գործը վերջացնեն: Ընդհանուր նահանգապետը քաղաքի սահմաններում նրանց գալուստը շնորհաւորեց: Այսօր կը ժամանեն միւսիւլման հասարակութեան մի քանի ուրիշ ներկայացուցիչներ եւս: Երկու հասարակութեան կողմից էլ օր ըստ օրէ աւելանում է զէնքը վայր դնելու ցանկութիւնը: Յուսում ենք, որ այս անգամ հաստատուն մի հաշտութիւն կը կնքվի:

—

Տանակերտ (Օրդուբաթի գաւ.), 12 օգոստոսի.

Մեր խաղաղ շրջանը նորից աղմկվեց:

Ամսիս 1-ին Բլօվ Թուրք գիւղի մօտ սպանվեց մի Թուրք: 7-ին Վանանդից Վերին-Ագուլիս տանող ճանապարհին, «Դարբանդ» կոչված տեղում, սպանվեց մի հայ: Նոյն օրը Վերին-Ագուլիսից Տանակերտ տանող ճանապարհին, «Մաջի-Սանա» կոչված տեղում, սպանվեցին երկու Օնիսցի Թուրքեր և մէկը վիրաւորվեց: Զարագործներն անյայտ են: Նոյն օրը Օրդուբաթում Թուրքերը, սպանելու նպատակով, յարձակվում են պօստային ցբէչի վրա (հայ). Նա հրաշքով ազատվում է, վիրաւորված ձեռքից և գլխից: Զարագործներից մէկը ձերբակալված է, իսկ երկուսը փախել են:

Օնիսցի սպանվածների և վիրաւորի պատասխանատուութիւնը, գեներալ-նահանգապետի յայտարարած կանոնների համաձայն, ընկնում է Տանակերտի վրա, իբրեւ նրա սահմաններում տեղի ունեցած դէպք. իսկ խեղճ տանակերտցին ոչինչով մեղաւոր չէ: Սպանվածներից մէկը, Մոլլա-Նագին, յայտնի էր մեր շրջանում իր խաղաղասէր բնաւորութեամբ և յարգանք էր վայելում հայերից. իր ազգակիցները սպառնում էին սպանել նրան, որ «չէր թողնում իրանց գիտեցածն անել»:

Ամբողջ շրջանի Թուրքերը, սաստիկ զայրացած «ըմբոստ» Տանակերտի վրա, սպառնում են այրել, մոխիր դարձնել նրան... Դաշտերում և սարերում շրջում են զինված Թուրքեր «սաղ-սաղ» տանակերցիներ որսալու... Դաշտային աշխատանքները կանգ են առել. յարաբերութիւնը շրջակայ գիւղերի հետ կտրված է, բոպէ առ բոպէ սպասում ենք յարձակման...

Տանակերտցի երիտասարդներ, փող վաստակելու տենչով մի՛ մնաք օտար երկրում. ցամաք հացով ապրելու տարի է: Դարձէք ձեր մայրերի, քոյրերի պատիւը պաշտպանելու, դարձէք գիւղը աւերումից փրկելու: Տանակերտի հարուստներ, ո՞ր օրվայ համար են ձեր ոսկիները. պարտաճանաչ մարդիկ պակսում են քարերի վրա գիւղի պատուի համար. Նրանք հացի փող չունեն... ցամաք հացի փող հասցրէք...

Հայրենակիցներ, լաւ իմացէք, որ դուք նախ և առաջ տանակերտցիներ էք, և գիւղը մոխիր դառնալուց ու մեզ կոտորելուց յետոյ՝ հարկաւոր չեն ոչ ձեր քաջութիւնը և ոչ ոսկիները...

Օգնեցէք մեզ...

Հայկ

—

Քարվանսարա, 15 օգոստոսի.

Ղազախի գաւառապետ Րէուտը, ինչպէս լսեցինք, գեներալ Ալփտանին խնդրել էր, որ, բացի Թուրքերի գիւղերում էկզեկուցիա նշանակելուց, թոյլ տրվի իրան Գրիգոր քահանայ Զիթչեանի կորստեան գործում յանցաւոր ճանաչվող գիւղերից 3000 ռուբլի եւս պահանջել յօգուտ տէր հօր և նրա ընկերակցի ընտանիքների:

Ամսիս 12-ին 56 կօզակ էր ուղարկված Թուրք Թաթլու և այլ գիւղերը էկզեկուցիայի համար, բայց այլ եւս աւելորդ համարվելով՝ յետ են կանչված: Կատարեալ ծաղր է մեր ոստիկանութեան արածը. տէր-Գրիգորը անյայտացել է Թուրք Թաթլու գիւղում. այդ ամէն ոք գիտէ, բայց այս 20-րդ օրն է՝ ոչ մի միջոց ձեռք չէ առնված դիակը կամ յանցաւորները գտնելու: Ո՞ւր է արդարութիւնը:

ՇԱՐԺՈՒՄՆԵՐ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

—Վերջին երկու շաբաթների ընթացքում, ինչպէս լսում ենք, սպասում են, որ կեանքի մէջ կը մտցնվեն արտակարգ միջոցներ ագրարական յուզումները խաղաղեցնելու համար: Մտադրութիւն կայ շուտով վաճառել գիւղացիական հողային բանկին չորս միլիոնից աւելի դեսեատին ունեցող հողերը: Այդ հողերը գիւղացիական բանկին առաջարկված մասնաւոր և այլ կատեգորիաների հողերի հետ միասին առած՝ գիւղացիական բանկի հողային պաշարը կը հասցնեն եօթ միլիոն դեսեատինի, որը վաճառման միջոցով մասերի են բաժանել սակաւահող գիւղացիների մէջ:

—Մինիստրների խորհրդի նախագահին ներկայացրած պաշտօնական գրութեան մէջ ագրարական անկարգութիւնների առիթով, նոր ստացված տեղեկութիւնների հիման վրա, հաղորդվում է մանրամասն կերպով մի նոր տեսակի ագրարական շարժման մասին: Գիւղացիները այժմ սաստիկ գրգռված են ոչ միայն հողատէրերի դէմ, այլ և հարուստ գիւղացիների դէմ: Վերջիններիս մեղադրում են, որ մասնաւոր հողատէրերի և ոստիկանութեան հետ մտերիմ են, որ կալուածատէրերի հետ նրանք զանազան համաձայնութիւններ են կայացնում հակառակ հասարակական վճիռների: «Դաւաճաններից» վրէժ են լուծում, կողոպտելով, կրելով նրանց հունձերը և զանազան միջոցներով: «Շատ տեղերում,—ասված է յիշեալ գրութեան մէջ,—գիւղացիները վախենում են հրդեհել հարուստ համագիւղացիների խրճիթները, երկիւղ կրելով որ մի գուցէ հրդեհը լափէ ամբողջ գիւղը: Մի քանի տեղերում, սակայն, գիւղացիները կանգ չեն առնում հրդեհումների առաջ: Հարուստ գիւղացիներին էլ վրէժ են լուծում նոյն ձեւով, երբեմն նոյնիսկ հրդեհածիգներ վարձելով»: Այդ տեսակ պարտիզանական կռիւը մանաւանդ խիստ կերպով բռնկել է, ինչպէս ասում է պաշտօնական զեկուցումը, Վեատկայի նահանգում:

—Ժանդարմների կորպուսի գլխաւոր կառավարիչ գեներալ Դեդիւլինը վերջին ժամանակներս բազմաթիւ խնդիրներ է ստանում Շուրջբալթեան երկրի ոստիկանական հաստատութիւններից ստրաժնիկների պաշտօնի համար թեկնածուներ ուղարկելու մասին, որովհետեւ նոյն պաշտօնները ստանձնելու համար յիշեալ երկրում դժուար է գտնել ցանկացողներ:

—Ջարդերից փախստականների նպաստամատոյց յանձնաժողովը տեղեկութիւն է ստացել Բելոստոկի ջարդից մնացած զոհերի մատաղահասակ որբերի վիճակի մասին: Նրանք բոլորն էլ ներկայումս գտնվում են գերմանհրէական Hilfsverein-ի խնամատարութեան ներքոյ, որը մանաւանդ հոգ է տարել, որպէսզի մի՛ նոյն ընտանիքի զաւակները իրարից բաժանված չը լինեն և գտնվեն մի դպրոցում, կամ գոնէ մի քաղաքում: Ընդամենը փէրէյնը ընդունել էր 105 երեխաներ: Դրանցից 33-ը ուղարկվել են Ամերիկա, 17-ը Անգլիա, 2-ը Շվէյցարիա, 3-ը Իտալիա, 9-ը Աւստրիա, 4-ը Արգենտինա, իսկ 37-ը մնացել են Գերմանիայում: Երեխաների մեծ մասը 8, 9, 10 և 11 տարեկաններ են:

—Վարշավայի գիտական բիւրօյի հաւաքած տեղեկութիւնների համաձայն, հրէաների էմիգրացիան Ռուսաստանում 1906 թւին հասել է անասելի մեծ չափերի: 1899 թւին Ռուսաստանից գաղթել են 60,982 հրէայ, 1900 թւին 90,787, 1901 թւին 85,256, 1902 թւին՝ 107000, 1903 թւին՝ 136,093, 1904-ին՝ 145,141, և 1905-ին 184,622, մինչդեռ 1906 թւի առաջին կիսամեակում միայն գաղթել է 250,000 հրէայ:

—Լեհաստանի նահանգական քաղաքներում, ինչպէս հեռագրում են Վարշավայից օգոստոսի 11-ին, մասսայական կալանաւորութիւններ են կատարվում: Լեհերից և հրէաներից շատերը հեռանում են քաղաքներից:

(«Рѣчь»)

—Ֆինլանդական երկաթուղային միութեան մէջ վերջին ժամանակներս պառակտում է ընկել: Բարձր ծառայողները (դրանց թւին են պատկանում և մեքենավարները), իրանց պահանջներին բաւարարութիւն ստանալով հոկտեմբերի գործադուլից յետոյ, հրաժարվեցին աջակցել ստորին ծառայողներին, որոնք Սվէաբորգի ապստամբութեան ժամանակ պահանջում էին երթեւեկութիւնը ընդհատել և սկսեցին փչացնել գիծը և կամուրջները: Այդ պառակտումի շնորհիւ գործադուլը չիրականացաւ:

—Օգոստոսի 9-ին Շլիսսելբուրգի վառօդային գործարանում կալանաւորվել են 22 բանւորներ: Դրանք այդտեղ կատարված անկարգութիւնների պարագլուխներն են եղել: Կալանաւորներին տարել են Պետերբուրգ:

(«Нов. Вр.»)

—«Нов. Вр.» լրագրի մէջ տպագրված է հետեւեալը. «Կրասնոյէ-Սելօյի ամառային զօրաբանակի մօտիկ տեղի ունեցած վերջին մանեօվրներից մէկում գվարդիայի և Պետերբուրգի զինւորական շրջանի գլխաւոր հրամանատար Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեւիչի մօտից մի քանի գնդակներ են թռչում: Այդ բանը նկատելով, Նորին Կայսերական Բարձրութիւնը դիմում է իրան շրջապատող շքախմբին մօտաւորապէս հետեւեալ խօսքերով. «Ես դէմ չեմ, որ Դրագոմիրովի խորհրդի համաձայն զօրքերի մանեօվրների ժամանակ իւրաքանչիւր մասին մի քանի ռազմափամփուշտ տրվի, բայց ես շատ կը ցանկայի իմանալ, մասերից որը հետեւեց այդ խորհրդին»: Դրանից յետոյ մանեօվրները շարունակվեցին»:

—Վարշավայից հեռագրում են «Рѣчь»-ին օգոստոսի 11-ից. «Այստեղ յամառ լուր է տարածվել, որ Սեմենովսկի գնդի գնդապետ Րիմանը Վարշավա է ուղարկված տեղական իշխանութիւններին օգնելու համար»:

—Պետերբուրգի նահանգի Պետերհօֆի գաւառի Լօպուխինկա գիւղի գիւղացիները օգոստոսի 9-ին ժողով գումարելով բօյկոտ են յայտարարել ստրաժնիկներին, որի շնորհիւ վերջիններս, մնալով առանց բնակարանի և ուտելիքի, փոխադրվել են մօտակայ Մեդուշի գիւղը: («Стр.»)

—Տօբօլի նահանգապետի յարուցած խնդիրքը՝ աւելացնելու գանձարանից տրվող նպաստը աքսորեալներին, որոնց թիւը Տօբօլի գաւառում 450 հոգի է, մերժված է: Արտօնութիւն ունեցող աքսորականների թիւը, որոնք ստանում են ամսական 6 ր., 6 հոգի է, իսկ միւսները ստանում են միայն 1 ր. 50 կ. ամսական: Կարիքը շատ խոշոր է: Նոյնիսկ հագուստի փող չեն տալիս: Աքսորեալները սովից փախչում են, նրանց որսում են և նորից բնակեցնում Սիբիրի տունդրաներում: («Тов.»)

ԳԱԳԻԿ ԹԱԳԱՒՈՐԻ ԱՐՁԱՆԸ

Պրօֆեսոր Մառի այս տարվայ պեղումները հանդէս բերին մի հետաքրքրական առարկայ—Գագիկ Թագաւորի արձանը:

Հետաքրքրական և ուսանելի է այդ արձանը մի քանի կողմերով: Նա գաղափար է տալիս Բագրատունեաց թագաւորներից մէկի ընդհանուր դէմքի և զգեստի մասին:

Գագիկ Թագաւորը ունի գլխին երկար մազեր, որոնք հասնում են մինչև բեխերի գիծը: Մազերը իրանց ծայրերում խոպոպներ ունեն: Թագաւորը ունի երկար միրուք, ինչպէս ժամանակակից հոգեւորական անձերը:

Գլխին նա դրած ունի մի արաբական փաթթոց՝ «չալմա»: Եւ դա հասկանալի է: Բագրատունիները ընդունում էին արաբական գերիշխանութիւնը: Նա հագել է երկար մուշտակ, որը յամենայն դէպս չէ ծածկում կուրծքը և ոտքերը: Վզից կախ է մի խաչ:

Արձանը իր ձեռքերի վրա պահում է Գրիգոր Լուսաւորչի տաճարը և այդպիսով հանդիսանում է իբրեւ եկեղեցու պաշտպան:

Իբրեւ այդպիսի պաշտպան՝ Գագիկը ունի ուխտաւորի հեզ դէմք, բարի և հոգատար արտայայտութիւն:

Արձանը շինված է կարմրագոյն քարից և բաւական տպաւորիչ է:

Պրօֆեսոր Մառի ներկայ գիւտը նրա այս տարվայ միւս գիւտերի հետ միասին դարձնում է նրա վերջին պեղումները բացի զուտ գիտնականից շատ հետաքրքրական, նաև տպաւորութիւն գործող առարկաներով:

Արձանը ունի նշանակութիւն նաև իբրեւ այն ժամանակվայ գեղարուեստական գործերի նմուշներից մէկը:

Մենք ներկայ նկարագրութիւնը արինք նկարիչ Ա. Ֆեթվաճեանի պատրաստած գունաւոր պատկերից, որը մենք առիթ ունեցանք տեսնելու նրա ժողովածուի մէջ:

Նկարչի ասելով, պրօֆեսոր Մառը հանել է արձանի աջող լուսանկարը, որը նա կը ներկայացնէ գիտնական աշխարհին իր մանրամասն զեկուցագրի հետ միասին:

ԹԻՖԼԻՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

IV

Պ. պ. Երզնկեանի, Արասխանեանի, Քալանթարի և Աթանասեանի ճառերը միանգամայն պատռեցին այն շլացուցիչ քօղը, պոկեցին այն զարդարուն դրախտահաւեան փետուրները, որոնցով դաշնակցականները աշխատում էին ծածկած պահել իրանց թայֆայական ու շահադիտական նպատակները: Նրանք զգացին, որ այդ հողի վրա վէճը շարունակել, Օհանջանեանի միջոցով բիւրօյի ներկայացրած ծրագիրը պաշտպանել ու շարունակել ժողովրդի աչքին թող փչել այլ եւս անհնարին է: Հարկաւոր էր ոտքի տակի հողը փոխել, բայց և անձնատուր չը լինել: Դրութիւնը շատ կրիտիքական էր, և այդ դրութիւնից Դաշնակցութիւնը դուրս հանելու դժուար պարտականութիւնը իր վրա վերցնողը պ. Ահարոնեանը եղաւ:

ԱՀԱՐՈՆԵԱՆ.—Պարոններ, ես զարմանում եմ, որ դուք այդ ծրագիրը ներկայացնող մարդկանց այն աստիճան միամիտ ու չը հասկացող էք կարծում, որ ենթադրում էք, թէ նրանք Էջմիածնի ժողովում անիրագործելի խնդիրների լուծումով պիտի զբաղվեն: (Այլ խօսքերով՝ ձեզ ո՞վ ասաց, թէ Օհանջանեանի ներկայացրած ծրագիրը մի լուրջ բան է. դա միայն ժողովրդի աչքին թող փչելու համար է): Մենք, ի հարկէ, պիտի աշխատենք այնտեղ անել այն, ինչ որ հնարաւոր է: Մենք շատ լաւ գիտենք, թէ ի՞նչ պիտի վերցնենք Էջմիածնի կենտրոնական (ուշադրութիւն՝ սա այլ եւս չէ ասում «սահմանադիր») ժողովից, շատ լաւ գիտենք, որ այդ ժողովը չէ, որ պիտի գայ լուծելու մեր կեանքն ալեկոծող բոլոր ցաւոտ հարցերը, գիտենք և այն, թէ աւելի կարեւոր, աւելի արմատական յեղաշրջումները որտեղից պիտի կորզենք:

«Բոլոր եւրոպական նշանաւոր սօցիալ-դեմոկրատները, ինչպէս՝ Կաուցկի, Բեբել, Էնրիկօ Ֆերրի և այլք ընդունում են, որ ամեն մի ազգ ունի իր զուտ ազգային ու ցեղական առանձնայատուկ ընդունակութիւններն ու բնաւորութեան գծերը, որոնց համաձայն էլ զարգանում է ամեն մի ազգի քաղաքակրթութիւնը: Ահա, մենք էլ, ընդունելով այդ թէօրիան, ցանկանում ենք մեր ազգի քաղաքակրթութիւնը կաղապարել նոր սահմանների մէջ: Մեր քաղաքակրթական գործը մինչև օրս կղերականների ձեռքումն է եղել և մենք այսօր ցանկանում ենք նրանց ձեռքից խլել մեր ժողովրդի կուլտուրական, մտաւոր, քաղաքակրթական կեանքը և յանձնել իսկական ժողովրդին:

«Միթէ սա յետադիմական գործ է, միթէ սա հակայեղափոխական քայլ է, և միթէ մենք աւելի յեղափոխական կը լինէինք, եթէ դպրոցները թողնէինք հոգեւորականների ձեռքում:

«Մեզ ասում են, թէ չը պէտք է մենք զբաղվենք կուլտուրական ու եկեղեցական հարցերով, մինչ չէ յաղթանակել Ռուսաստանի մեծ յեղափոխութիւնը: Բայց միթէ յեղափոխականը չէ կարող և այդպիսի գործերով զբաղվել, միթէ յեղափոխականը միշտ պէտք է հրացանը ձեռքին ման գայ:

«Կուլտուրական զանազան հարցերով զբաղվելը ո՛չ միայն չէ հակասում յեղափոխութեանը, այլ և օժանդակում է նրան, որովհետեւ մասսաները դէպի ընտրողական պայքարը, դէպի գիտակցութիւն քաշելը ինքնըստինքեան արդէն մի մեծ բան է: Այդ տեսակէտով նոյն իսկ մեր ծխական ընտրութիւններն էլ մեծ նշանակութիւն ունեն: (Իսկ Պետական Դումայի ընտրութիւնները չունէին):

«Թող մեր հակառակորդները հետեւողական լինեն, եթէ նրանց կարծիքով՝ այս փոթորկոտ օրերում առհասարակ չը պէտք է զբաղվել կուլտուրական գործերով, ու թող պահանջեն՝ փակել բոլոր դպրոցները և այլ հանրօգուտ հաստատութիւնները: Բայց ես գիտեմ, նրանք այդ չեն պահանջի:

«Մեզ ասում են նաև, որ մենք արտաքին դժուարութիւնների կը բաղխենք Էջմիածնում և որ ժողովը կը փակեն: Թող փակեն. մենք դրանցից ոչինչ չենք կորցնի, որովհետեւ դա աւելի մեծ գիտակցութեան կը հասցնի ժողովրդին մեր պահանջների վերաբերեալ, որոնք աւելի մեծ թափով հրապարակ կը գան. նամանաւանդ որ ռէակցիայի յարատեւ յաղթանակ ընդունելը այսուհետեւ մի աբսուրդ է»:

Վերջացաւ պ. Ահարոնեանի ճառը, և ես սպասում էի, թէ Օհանջանեան կամ մի այլ ձախակողմեան դաշնակցական վեր կը կենայ և կը բողոքի պ. Ահարոնեանի դէմ, որ նա, շատ շուտով համաձայնելով հակառակորդ ճառախօսների հետ, ինքն էլ խոստովանեց, որ իսկապէս Էջմիածնի ժողովը սահմանադիր ժողով չէ, և ոչ էլ դրա հետ կապ ունեցող գործերը յեղափոխական ու «սօցիալիստական» բնաւորութիւն են կրում, ինչպէս որ իրանք ամբողջ երկու ամիս հաւատացրել էին միամիտ ժողովրդին: Միակ բանը, որ կարողացաւ ասել պ. Ահարոնեան, այդ այն էր, որ «յեղափոխական» և «սօցիալիստ» Դաշնակցութիւնը ուզում է կղերականների ձեռքից խլել դպրոցական գործը և ժողովրդի ձեռքը յանձնել, մի բան, որ կատարված իրողութիւն կարելի է համարել այն օրվանից, երբ Վեհափառ Կաթողիկոսը, դեռ Կենտրոնական Ժողով գումարելու գաղափարից շատ առաջ, ժողովրդի մարդկանց էր յանձնել ուսումնարանների համար ծրագիր կազմել և այդ առթիւ էլ ժողով պիտի գումարվէր մայիսին: Ուրեմն այդտեղ էլ պ. Ահարոնեանի ճառը մի մեծ վրիպում գործեց: Մնում է միայն այն, որ Դաշնակցութիւնը կուլտուրական համեստ գործերով է զբաղվում և այդ գործերը կարող են օժանդակիչ լինել յեղափոխական գործերին: Այդ զբաղմունքի դէմ, ի հարկէ, ոչ ոք ոչինչ չէ կարող ասել, բայց և ոչ մի տեղ կուլտուրական և ոչ մի համեստ գործիչ երբեք իրան թոյլ չի տայ այն աստիճան յանդգնութեան հասնել, որ կաշուց դուրս գայ և աշխարհ թնդացնի, թէ ինքը յեղափոխական և սօցիալիստ է:

Մենք ենթադրում էինք, թէ ներկայ շէֆերից մէկն ու մէկը կը հասկանայ պ. Ահարոնեանի ստեղծած նոր խախուտ դրութիւնը և կը բողոքի նրա դէմ: Բայց բողոքող չեղաւ: Շէֆերի փոխարէն վեր կացաւ խօսելու «Ալիք-Զանգ»-ի աշխերտ Նահապետեանը, որ սակայն հազիւ էր թոթովելով մի երկու անգամ կարծել խօսքը խոնարհել, երբ «փեշը քաշեցին» և տեղը նստեցրին: Սրանից յետոյ խօսելու հերթը Խանազատեանինն էր:

«Պարոններ,—ասաց նա,—լսելով պ. Օհանջանեանի ճառը և մանաւանդ այն, որ այդ ճառը մի խումբ մարդկանց կարծիքների զեկուցումն է, ես ուղղակի զարմանում և հարց էի տալիս ինձ, թէ արդեօք ես եմ Աֆրիկայից եկել, թէ այդ մտքերի հեղինակներն են Աֆրիկայից գալիս»:

Ձայներ.—Դուք էք այնտեղից եկել:

ԽԱՆԱԶԱՏԵԱՆ.—Թողէք. բայց այդ մասին կարող են կողմնակի մարդիկ դատել: Սակայն ես այդպիսի հարց էի տալիս ինձ Օհանջանեանի ճառը լսելիս, իսկ երբ լսեցի պ. Ահարոնեանի ճառը, տպաւորութիւնը բոլորովին հակառակը դուրս եկաւ: Պ. Օհանջանեանը մեզ ներկայացրեց հարիւր ռուբլիանոցներ, իսկ պ. Ահարոնեանը այդ հարիւրանոցները մանրեց, կոպէկների վերածեց և ապա ուզեց այդ կոպէկներին ոսկու արժէք տալ: Համաձայնեցէք, պարոններ, որ ինչպէս որ կոպէկը չէ կարող ոսկու արժէք ունենալ, այնպէս էլ պարզ ու համեստ կուլտուրական աշխատանքը չէ կարող յեղափոխական մեծ գործունէութեան արժէք ունենալ: Հէր օրհնածներ, էլ ինչո՞ւ էիք մարդոց այնպիսի փքուն ու շլացուցիչ ծրագիրներ ներկայացնում. մի քիչ վաղ ասէիք, էլի, որ դուք ամենապարզ հայ քրիստոնեաներ էք և զուտ ազգային ու կրօնական խնդիրներից դուրս ոչ մի գործ չունէք: Զարմանալին այն է, որ դուք, երբ մամուլի մէջ և դրսում ձեզ նացիօնալիստ և շովինիստ են անուանում, վիրաւորվում էք, այնինչ այստեղ ամբողջ ժամանակ խօսում էիք զուտ ազգային յատկութիւնների, ազգային ինքնուրոյն կուլտուրայի և այլ և այլ առանձնայատկութիւնների մասին: Ապա դա նացիօնալիզմի ու շովինիզմի տրամաբանութիւններ չեն, ի՞նչ են: Ի հարկէ, դա ճաշակի և համոզումների խնդիր է, բայց ես կուզենայի այդ բանը այստեղ ընդգծել, որ դուք այլևս չը վիրաւորվէք, երբ ձեզ նացիօնալիստ և շովինիստ անուանեն»:

Դրանից յետոյ Հ. Օհանջանեանը վերկացաւ խօսելու, բայց այս անգամ նա շատ բան չասաց: Ասաց նախ այն, որ Խանազատեանն է Աֆրիկայից եկել, և ապա այն, որ ռուս սօց.-դեմօկրատների ղեկավարներն են ամենամեծ շովինիստները և ոչ թէ դաշնակցականները (!!):

Նոցենեան մասնանիշ եղաւ այն հանգամանքը, որ եթէ կենտրոնական ժողովը ցանկանայ ամենաանկարեւոր եկեղեցական խնդիրներով զբաղվել, դարձեալ նա չէ կարող ոչ մի նպատակի հասնել, որովհետեւ այդտեղ էլ «Պոլոժէնիյայի» խնդիրը կայ, որին փոփոխելը կամ վերացնելը դարձեալ Էջմիածնից չէ կախված, այլ Պետերբուրգից: «Հետեւապէս, որ կողմն էլ որ դառնաք,—ասաց նա,—դուք պիտի մտածէք նախ կենտրոնական կառավարութեան հետ ձեր հաշիւները վերջացնել և ոչ թէ Էջմիածնի փեշերից կախվել»:

Վերջապէս տեղից շարժվում է դաշնակցականների ղուչը՝ Թոփչեան: Բայց այս անգամ նրա ձայնը շատ թոյլ է, այլեւս չը կան նրա յարձակողական խրոխտ շեշտերը, ընդհակառակը՝ նա պաշտպանողական դրութեան մէջ է և աւելի լալիս է, քան բարկանում:

«Զարմանալի մարդիկ են այս սոց.-դեմոկրատները,—ասում է նա,—իրանց երեւակայութեամբ մեզ այնպիսի բաներ են վերագրում, որ իսկի չը կայ: (Վերագրողը սակայն Օհանջանեանն էր և ոչ սոց.-դէմոկրատները): Ամեն մի խելահաս մարդու յայտնի է, որ դաշնակցականները, կենտրոնական ժողովին մասնակցելով, ցանկանում են միայն հայկական ներքին-կուլտուրական կեանքը կարգաւորել: Թող սոց.-դէմոկրատները իրանց ճառերով մխիթարվեն, իսկ մենք ամենափոքրիկ գործն էլ դրանից գերադասում ենք և դրա համար էլ կը գնանք Էջմիածին: Զարմանալի է, որ այդ ճառողները չեկան ընտրութիւններին»...

Ձայներ.—Չէիք թողնում:

Թոփչեան (Շարունակելով).—Իսկ այժմ եկել և այստեղ են ճառում: Պարոնները թող չանհանգստանան «Պոլոժէնիյայի» վերաբերեալ: Կալուածների գրաւման ժամանակ էլ «Պոլոժէնիա» ու օրէնքներ կային, բայց ժողովուրդը Դաշնակցութեան ղեկավարութեամբ կարողացաւ կալուածները յետ ստանալ, այժմ էլ նոյն ժողովուրդը, նոյն տարրերը կարող են իրանց կամքը կատարել տալ, երբ արգելքներ կը պատահին»:

Վիճաբանութիւնները վերջացած էին: Ժամանակը սաստիկ ուշ էր. անհրաժեշտ էր ընտրութիւնները վերջացնել: Այնուամենայնիւ նախագահ պ. Տ. Յովհաննէսեան ցանկացաւ, իբրեւ պատուիրակ, մի քանի խօսք ասել, կամ աւելի ճիշտ է, մի քանի գոհարներ աւելացնել եղածների վրա: Այդ գոհարներից ամենագլխաւորն այն էր, որ նա ասաց, թէ ինքը «համակրծիք է թէ Համ. Օհանջանեանի և թէ Աճարեանի հետ»: Այլ խօսքերով, ինչպէս Թրքահայերն են ասում՝ «սանիկ ալ կըլլայ, անանկ ալ կըլլայ»: Միւս գոհարն էլ այն էր, որ Տ. Յովհաննէսեանը, սոց.-դեմոկրատներին էլ դաշնակցականների աչքինով չափելով, յայտնեց, որ ամեն մի սոց.-դեմոկրատի կաշին եթէ փոքր ինչ քերես, տակից նացիոնալիստ դուրս կը գայ:

Ընտրութիւնների կոմեդիան սկսվելիս, բոլոր ոչ-դաշնակցականները հեռացան, նախօրօք հաւատացած լինելով որ նրանց բոլոր թեկնածուներն էլ (բժ. Տէր-Միքայէլեան, Սիմ. Շիխեան, Սմբատ Փարտաշեան ու Յով. Ամիրխանեան) պիտի անցնեն, և նրանք սխալված չէին:

Խ.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՐԴԿԱՆՑ ԿԱՐԾԻՔԸ

—

Անգլիացիների վերին աստիճանի գործնական մարդիկ լինելը արդէն վաղուց յայտնի է ամբողջ աշխարհին: Բայց և այնպէս չափազանց բնորոշ է այն հանգամանքը, որ այդ վաճառական ժողովուրդը, ինչպէս պատմում է «Русс. Вѣд.» թերթի Լոնդոնի թղթակիցը, վերջին ժամանակներս մի քանի հմուտ և գործնական մարդիկ է ուղարկել Ռուսաստան յատկապէս տեղումը ուսումնասիրելու երկրի դրութիւնը և հաստատ գաղափար կազմելու, թէ արդեօք կարելի է ներկայ մեր կառավարութեանը վստահանալ ու փող տալ, եթէ սա ցանկանայ էլի նոր փոխառութիւն խնդրել: Հակառակ բոլոր պաշտօնական հերքումներին, անգլիացիք հաւատացած են, որ մեր կառավարութիւնը շուտով այդպիսի կարիք պիտի զգայ անպատճառ և պիտի դիմէ եւրոպացիներին: Իսկ եթէ նոր փոխառութիւն չէ կարելի վստահանալ, այդ պարագայում ինչպէս անելու է, որ նախկին տուած դրամները փրկվեն:

Այդ գործնական մարդկանցից մէկը՝ մի խոշոր բանկիր, Ռուսաստանից վերադառնալով, զեկուցում է տուել իր շրջանի մարդկանց մի ժողովում, ուր պատահմամբ ներկայ է եղել և յիշեալ թերթի թղթակիցը: Եւ ահա թէ ինչ է պատմում սա.

«Այդ գործնական մարդը (բանկիրը) Ռուսաստան էր գնացել յատկապէս համոզվելու համար, թէ որ աստիճան ձեռնտու է հին կարգերին (ռեժիմին) փող վստահանալ: Եւ ահա թէ ինչ եզրակացութեան է եկել այդ գործնական մարդը: Հին կառավարութեանը փող տալը անխելքութիւն է, որովհետեւ այդ կառավարութիւնը, զեկուցանողի ասելով. «is played out», այսինքն՝ պատարագը դուրս եկած է: Ձեռնտու չէ փող տալ այնպիսի մի կացութեան, որը պահպանվում է սուինները և այն էլ դեռ երերուն վիճակի մէջ է: Եթէ կառավարութեանը անհրաժեշտ է, իր դրութիւնը պահպանելու համար, ժողովրդի կէսը բանտերում ու աքսորավայրերում փակել և կամ խստագրած պահպանութեան մէջ պահել, այդ պայմանների տակ երբեք գործերը չեն կարող ծաղկել ու առաջ գնալ: Երկրի վրա հսկողութիւնը և ամեն կարգի հակէսներին պահելը, լինեն դրանք մունդիրով թէ առանց մունդիրի, նոյնչափ մեծ, գուցէ և շատ աւելի, փող է նստում, ինչպէս և մեծ պատերազմ վարելը: Պատերազմի ժամանակ օտար երկիր են աւերում, իսկ ռուս կառավարութիւնը իր սեփական երկիրն է աւերում: Զեկուցանողը մի շարք փաստեր բերեց, որոնք արդէն լաւ ծանօթ են ռուս ընթերցողներին, և եզրակացրեց հետեւեալ խօսքերով. «Անգլիայի դրամական մարդկանց կողմից կատարեալ անխելքութիւն կը լինի այդպիսի կառավարութեանը նորից մի ֆարդինգ (ամենափոքր դրամն է, ինչպէս մեր 1/4 կոպէկը) անգամ վստահանալը: 1906 թ. փոխառութիւնը մեզանից ստացան «under false pretence», (այսինքն՝ խաբէութեամբ)»:

Բանը նրանումն է, որ այդ զեկուցումը մի եզակի բան չէ Անգլիայում: Վերջերս հռչակաւոր «Times» թերթում լոյս է տեսել մի այլ գործնական մարդու զեկուցումը, որը նոյնպէս մօտ ժամանակներս է վերադարձել Ռուսաստանից, ուր նա գնացել էր նոյնպէս մեր երկրի ֆինանսական դրութիւնը ուսումնասիրելու համար և բաւական երկար էլ ապրել է Պետերբուրգում: Ինչպէս երեւում է, այդ պարոնը բաւական լաւ ծանօթ է եղել ռուսաց լեզուին և շփվել է շատ բարձրաստիճան չինովնիկների, զինուորականների, ֆինանսիստների, ականաւոր հասարակական գործիչների և այլ մարդկանց հետ: Անգլիա վերադառնալուց յետոյ այդ գործնական ճանապարհորդը սկսում է քննութեան առնել այն բոլորը, ինչ որ գրվում է Ռուսաստանի մասին անգլիական թերթերում, և ապա իր հեղինակաւոր ձայնով հրապարակ է գալիս «Times»-ի էջերի մէջ:

«Ինձ չափազանց զարմացնում են երկու հանգամանք,—ասում է այդ պարոնը:—Նախ այն, որ անգլիացին պատրաստ է, հակառակ ամեն բանի, հաւատալ ռուս կառավարութեան իր մասին արած բոլոր գնահատութիւններին և, իբրեւ դրա տրամաբանական հետեւանք, հաւատալ նաեւ այն բոլորին, ինչոր այդ կառավարութիւնը ասում է իր հակառակորդների մասին: Վերջ ի վերջոյ շատ բնական է, որ ազատ երկրի զաւակները խեթ աչքով են նայում այն մարդկանց վրա, որոնք բացարձակապէս թշնամաբար են վերաբերվում իրանց կառավարիչներին: Մեզ համար հասկանալի է, թէ ինչու վայր ի վերոյ խնդրի հետ ծանօթները այդ մարդկանց բոլորին էլ յեղափոխականներ են անուանում, միեւնոյն փակագծի մէջ դնելով և առաջադիմականներին և անարխիստներին: Նոյնպէս շատ բնական է, որ անգլիացիք հալած իւղի տեղ են ընդունում ռուս կառավարութեան բոլոր խոստումներն ու լաւ լաւ խօսքերը, ուշադրութիւն չը դարձնելով թէ դրանց երեխայական անիրագործելիութեան վրա և թէ այն հանգամանքին, որ կառավարութեան բոլոր վարմունքները արմատականապէս տարբերվում են ռեֆորմների խոստումներից: Գոնէ մինչև վերջին ժամանակները անգլիացիների մեծամասնութիւնը այդպէս էր վերաբերվում ռուսական գործերին: Բելոստոկի կոտորածը, իշխան Ուրուսովի մերկացումները և նամանաւանդ Դումայի ցրվելը անգլիացիների աչքերը բացին»:

Այս մի քանի նկատողութիւններից յետոյ, «Times»-ի յօդուածագիրն անցնում է Ռուսաստանի տնտեսական դրութեան վերլուծութեանը:

«Բիւջէտը կազմված է համարեա թէ 200 միլլիոն րուբլու դեֆիցիտով,—ասում է նա,—որը դեռ ծածկված չէ վերջին փոխառութեամբ: Պաշտօնապէս ասվում է, թէ 1906 թ. վեց ամսվան ընթացքում եկամուտը նախահաշւից համարեա թէ 70 միլլիոն րուբլով աւելի է: Այդ փողերի մեծ մասը անուղղակի հարկերով է ստացվել, նամանաւանդ օղիի վաճառումից: Վերջին հանգամանքը շատ չարաղուշակ նշան է յեղափոխութեան ժամանակ: Այդ բոլոր փողերը չեն բաւականանայ նոյնիսկ սովեալներին օժանդակութիւն տալու համար: Իսկ յետոյ, կասկած չը կայ, որ տարվայ երկրորդ կիսում եկամուտը կը պակասի... Բիւջէտը անպայման դեֆիցիտով կը լրանայ: Միմիայն մի նոր շատ խոշոր արտաքին փոխառութեամբ, որին անհրաժեշտաբար ստիպված պիտի լինեն դիմել մի քանի ամսից յետոյ, կարելի կը լինի մի առժամանակով յետաձգել ֆինանսական սնանկութիւնը: Հազիւ թէ ինձ հարկաւոր է այստեղ աւելացնել, որ, Դուման ցրվելուց և կրկին հին բիւրոկրատիական կարգերին վերադառնալուց յետոյ, կառավարութիւնը այլ եւս շատ քիչ շանսեր ունի այդպիսի մի փոխառութիւն աջողեցնելու: Այն ֆինանսիստները, որոնք գէթ մասամբ ծանօթ են գործերի դրութեան հետ Ռուսաստանում, այժմ հասկանում են, որ ռեակցիային ձեռք բռնելը ուղղակի իրանց փողերը քամուն տալ կը նշանակէ: Ռուսաց կառավարութիւնը հիմա շատ սիրով է զանազան ինտերվիւներ ընդունում, որպէսզի կարողանայ արտասահմանեան հասարակութիւններին համոզել, թէ ինքն էլ կարող է ագրարային և այլ ռեֆորմները իրագործել, առանց Դումայի օգնութեան, և թէ ժողովրդային ներկայացուցիչները ցրվելը ռեակցիային վերադառնալ չէ նշանակում: Այդ ինտերվիւները այժմ մինչև իսկ հասարակութեան մեծ խաւերին էլ չեն համոզում, իսկ ինչ վերաբերում է ֆինանսիստներին, նրանք այլեւս շատ լաւ գիտեն ռուս կառավարութեան պաշտօնական խոստումների նշանակութիւնը:

«Ենթադրենք, սակայն, շարունակում է յօդուածագիրը, թէ կառավարութեանը կը աջողվի մի որեւէ հրաշքով ժամանակաւորապէս յետաձգել ֆինանսական կրիզիսը: Ռուսաստանում հիմա ամենահիմնական խնդիրը ագրարային հարցն է: Գիւղացիները հող և ազատութիւն են պահանջում, մինչդեռ կառավարութիւնը չէ ցանկանում և չէ կարող լուծել այդ խնդիրը, որ այնպէս աջող կերպով դրված էր Դումայում: Այսպիսով կառավարութիւնը, եթէ նրան աջողվի դրամ գտնել, որ կատարեալ հրաշք կը լինի, այնուամենայնիւ երես առերես կանգնած կը լինի ընդարձակ ագրարային շարժումների առաջ: Ռուս ժողովրդի զարթնումը զարմանալի արագութեամբ կատարվեց: Գիւղացիներին այլեւս դժուար է ճանաչել: Ընկճված, ստրկական խոնարհութիւն ունեցող մուժիկը այժմ ամեն տեղ քաղաքացի է դառնում և յամառութեամբ ազատութիւն և հող է պահանջում: Մինչև վերջին ժամանակները նա խիստ օրինականութիւն էր պահպանում, որին սակայն մի մեծ հարուած հասցվեց Դուման ցրվելով, և ագրարային հարցը ամենաասուր կերպով հրապարակ դրվեց գիւղացիների ցանկացած ձեւով:

«Գիւղը ֆանատիկոսաբար հաւատում էր իր ժողովրդային ներկայացուցիչներին: Հիմա ինչ կը մտածի նա, երբ ոյժով վերջ դրեցին Դումայի գրգռումներին: Պատգամաւորները կանգնեցնում էին գիւղացիներին և խորհուրդ էին տալիս նրանց հանգիստ սպասել, մինչև որ Դուման կը լուծի ագրարային խնդիրը: Այսպէս ուրեմն, ընդարձակ գիւղացիական շարժումը անխուսափելի է: Կարո՞ղ է արդեօք հին կառավարութիւնը նրան վերջ դնել: Ռուսաստանում մինչև 40 միլլիոն չափահաս գիւղացիներ կան, որոնցից 37 միլլիոնը իրանց գոյութիւնը պահպանելու համար բաւականաչափ հող չունեն: Եթէ հող չը տան, այդ 37 միլլիոնը պատրաստ է յեղափոխութեան համար:

«Անվերջ բանկումներն ու զայրոյթի արտայայտութիւնները կայսրութեան զանազան մասերում ապացուցանում են, որ հին կարգը կատարելապէս լուծված է, այսպիսի խօսքերով է վերջացնում իր յօդուածը գործունեայ անգլիացին: Սառոյցի միջոցով կարելի է դիակի լուծման պրօցեսը ժամանակաւորապէս կանգնեցնել, սակայն, որչափ էլ ջերմութեան աստիճանը մենք իջեցնենք, չենք կարողանայ մեռած մարմին յարութիւն տալ: Ռուսաստանի հին կարգը այժմ մի լուծվող դիակ է: Ռեակցիայի և զինուորական դիկտատուրայի միջոցով կարելի է միայն կարճ ժամանակով նրա փտելը կանգնեցնել»:

Այսպէս են մտածում գործնական մարդիկ: Սակայն շատ հետաքրքիր կը լինի տեսնել, թէ ո՞ր աստիճան այդ գործնական ֆինանսիստները հետեւողական կը լինին, և նորից լայն չեն բաց անի իրանց դրամարկղների դռները մեր Վիտտէների առաջ, երբ դարձեալ մի որեւէ խորամանկ ու շահաւէտ կոմբինացիա կառաջարկվի սրանց կողմից:

Այդ մեզ ցոյց կը տայ մօտիկ ապագան:

Ր

ԲԱԳՈՒԻ ԿԵԱՆՔԻՑ

Խորհրդաւոր լռութիւն.—Մեր բանուոր դասը և գործադուլները.—Մեր կուսակցութիւնները և Թուրք համբաւներս մէջ տեղի ունեցող ընդհարումները:

—

Օգոստոսի 13-ին

Երկար ամիսներ է, որ մեզանում լռութիւն է տիրում. հայի և Թուրքի յարաբերութիւնը մխիթարական է, որովհետեւ ոչ մի ընդհարում տեղի չունեցաւ, չը նայելով որ Շուշուց ստացված լուրերը բաւական ծանր տպաւորութիւն էին թողնում Թուրք ազգաբնակութեան վրա: Սկսած անցեալ ամսի 24-ից մինչեւ այսօր էլ ամեն գնացքով Շուշուց Թուրքեր են գաղթում Բագու, շատերը ամբողջ ընտանիքով կին, երեխայ և այլն: Թուրքերը ցոյց են տալիս սիրալիր ընդունելութիւն և չեն խնայում իրանց նիւթական օգնութիւնը: Եւ չը նայելով այդ հարիւրաւոր գաղթականներին, որոնք չափազանցրած գոյներով են նկարագրում իրանց կրած դառն օրերը և գրգռում են տեղացի Թուրքերին հայերի դէմ, բայց և այնպէս քաղաքիս Թուրքերը լուռ են:

Ասացի «խորհրդաւոր լռութիւն». այդ ասում եմ այն պատճառով, որ Թուրք երիտասարդները ներկայումս գտնվում են շրջակայ գիւղերում՝ ամարանոցներում և, ինչպէս հէնց Թուրքերն են ասում, լուրջ պատրաստութիւն են տեսնում: Մի Թուրք մինչեւ անգամ հետեւեալ խօսքերը ասաց, երբ անցեալ շաբաթ գիւղից էր վերադարձել. «Ամբողջ գիշերները քնել չենք կարողանում. հրացանաձգութեան ձայնը մեզ հանգիստ չէ թողնում: Իմ այն հարցիս, թէ ինչ հրացանաձգութիւն է, քանի որ Բագուի շրջանում ոչ մի այլազգի գիւղ չը կայ, որ ընդհարվեն Թուրքերի հետ, նա պատասխանեց, որ «մեր ջահիլները սովորում են օֆիցէրից և ստրաժնիկներից ուղիղ կրակել»:

Մեր համեստ կարծիքով, եթէ տեղիս Թուրքերը Բագուի շրջակայ գիւղերում թնդանօթի գործարան էլ սարքելու լինեն, կառավարութիւնը չէ կարող իմանալ, որովհետեւ Բագուի գաւառը ունի 35 Թուրքաբնակ (չհաշված) գիւղեր, բայց ոչ մի հատ այլազգի: Ստրաժնիկները Թուրք, Թուրք օֆիցէրներ էլ ներկայումս շատ:

Երանի թէ Թուրքերի ներկայ լռութիւնը խորհրդաւոր չը լինէր:

—

Նաւթային աշխարհում գործադուլը շարունակվում է, որը զուտ տնտեսական բնաւորութիւն ունի: Սակայն գործադուլ անող բանուորները, փոխանակ տնտեսական ապահովութիւն ստանալու, տնտեսապէս քայքայվում են: Գործադուլը ահա 20 օր է, որ ներկայումս շարունակվում է գլխաւորապէս Նոբելի նաւթահանքերում: Բանուորների անհամեմատ մեծամասնութիւնը Թուրքեր են. անյաղթելի վիշապ Նոբելը հանգիստ կերպով դիտում է այդ բանուորների գործադուլը և զուարճանում է, թէ ինչպէս բանուորները իրանց վերմակն ու բարձն են ծախում մի կտոր հաց ձեռք բերելու համար...

Գործադուլը Բիբի-Հէյբաթի «Արամազդ» նաւթահանքում շարունակվում է ահա մի ամիս 15 օր շարունակ: Այդ փոքրիկ վիշապը նոյնպէս փաթթվել է իր բանուորների մէջքով ու սպառնում է ջարդել նրանց կողքի ոսկորները:

Պէտք է անպայման կերպով խոստովանած, որ ինչ խելքի տէր այդ մեծ ու փոքր վիշապներն են, նոյնպիսի խելք էլ ունենին մեր խակ բանուորները: Մեր բանուոր դասը գործադուլը լսել է յեղափոխական կազմակերպութիւններից, բայց վերջիններս այնքան անշնորհք են գտնվել, որ գործադուլի արտաքինը ծանօթացնելով բանուորներին՝ ներքին կապը հասկացնել չեն կարողացել: Բաւական է, որ մէկը խաղէյինի կամ կառավարչի հետ ընդհարվեց, և ահա գործադուլը պատրաստ է... իսկ երբ բանուորը մնում է սոված, նրանից հեռու են փախչում այդ կեղծ վարդապետները: Տգէտ բանուորը լսել է գործադուլ, և, նրա կարծիքով, աւելի լաւ կը լինի ամիսը մի անգամ անել այդ գործադուլը, բայց երբ նա անում է բաց ճակատով կանգնած, նրան ղեկավարող չէ լինում, նա ընկճվում է, խոնարհվում ու ճռնշվում է: Լաւ է մի կամ երկու տարին մի անգամ գործադուլ անել և հաստատ հիմք պահանջների վրա, քան ամիսը մէկ, և այն էլ սոված:

—

Մեր լրագիրներից մեր կուսակցութիւնների գործունէութեան մասին ոչ մի մխիթարական տեղեկութիւն քաղել չենք կարողանում: Բացի գրական բանակռուից, զէնքի կռիւներ էլ են տեղի ունենում, որ ընդհանուր զզուանք է պատճառում:

«Մշակի» № 175-ում «Կոչ հայ կանանց»-ը բաւական լաւ տպաւորութիւն թողեց. ցանկալի է, որ նոյնանման կոչեր մեր կուսակցական տիկիններն ու օրիորդներն էլ անէին թէ լրագրութեան մէջ և թէ մասնաւոր ժողովներում:

Եթէ օր առաջ եղբայրասպանութեան առաջը չառնվի, հաւանական է, ինչպէս հաստատ աղբիւրից տեղեկութիւն ունեմ, Բագուումն էլ տեղի ունենայ այդ տխուր երեւոյթը, որի հետեւանքը աւելի սարսափելի կը լինի, քան բոլոր այն եղբայրասպանութիւնները, որոնք տեղի ունեցան զանազան քաղաքներում ու գիւղերում: Մեր կարծիքով, մնում է մի բան անել, եթէ մէկ էլ կրկնվի եղբայրասպանութիւնը՝—հայ հասարակութիւնը ինքնապաշտպանութեան գործի ղեկը իր ձեռքը առնէ և եղբայրասպան կուսակցութիւններին բօյկոտի ենթարկէ ընդմիշտ:

Օտարները մեզ ասում են կուլտուրական, առաջադիմող և ինքնաճանաչ ազգ, բայց էլ ո՞ւր մնաց մեր կուլտուրան, երբ երկու ամիս առաջ դաշնակցականները եօթը հնչակեան սպանեցին Գորիսում, հնչակեաններն էլ երկու դաշնակցական Երեւանի նահանգում, Բագուի Թուրքերն էլ Նովոխանցի երկու Թուրքի սպանեցին Ղուբա-մէյդանի հրապարակում անցեալ շաբաթ: Ուրեմն 9-ը եղբայրը մենք սպանեցինք, 2-ը Թուրքերը իրանց Թուրքերից: Ասացէք, ո՞ւր է մեր կուլտուրան... եւրոպական տարազի մէջ, թէ հատը երեք րուբլանոց արտասահմանից նոր ստացված վզկապի:

Աշուրովը հինգ կօզակով է փողոց դուրս գալիս, որ իրան Թուրքերը չը սպանեն, Հնչակ. և Դաշնակց. չէֆերն էլ իրանց կօզակներով...

Ո՞ւր է կուլտուրան:

Բագուում սպասվում է մեծ ընդհարումն բագուեցի և Նովոխանցի Թուրքերի միջև, որի համար հայերին զգուշացրել են, որ կռուի սկսվելու պէս հեռանան:

Թ. Մէժլումեան

ՊԱՐՍԻՑ ՀԻՒՊԱՏՈՍԸ ԲԱԹՈՒՄՈՒՄ

—

Օգոստոսի 15-ին

Պարսից հիւպատոս միրզա Մամադ-խանի կարճ միջոցում այստեղի պարսկահպատակ ժողովրդի մէջ ձեռք բերած ժողովրդականութիւնը ծայրայեղութեան է հասնում: Որպէս միապետական ռեժիմի տակ հեծող և զանազան անհատների քմահաճութեան ենթակայ ժողովուրդներից մէկը, պարսկահպատակ պանդուխտները այնքան տանջվել են անբարեխիղճ հիւպատոսների հարստահարութիւններից և ճնշումներից, որ ամեն մի նրանց ցաւերին կարեկցողը, նրանց վրա ուշք դարձնողը, նրանց մարդի տեղ դնողը մի նոր մարգարէ, մի սրբութիւն է թւում նրանց աչքում, մանաւանդ եթէ այդ բոլորը տեղի է ունենում մի պաշտօնեայի մի հիւպատոսի կողմից: Եւ միրզա Մամադ-խանը այդպիսիներից է. նա առանց խտրութեան սիրելի է եկած օրից բոլոր պարսկահպատակներին հաւասար չափով, սէր և միութիւն, սերմանել նրանց մէջ, գրաւել դէպի իրան և յարգելի դարձնել իր խօսքը ամենքի համար ու այդպիսով արգելք հանդիսացել շատ ու շատ ննգաւոր միտումների իրագործման... Ու ժողովուրդը սկսել է սիրել նրան անչափ սիրով, մինչեւ իսկ ծայրայեղութեան հասած սիրով:

Ամսիս 13-ի երեկոյեան միրզա Մամադ-խանը հեռագիր է ստանում Թեհրանից, թէ նա նշանակված է Բագուում պարսիկների հիւպատոս, որի համար և պարտաւոր է իսկոյն և եթ տեղափոխվել Բագու: Միւս օրը նա սկսում է այցելութիւնների գնալ թէ տեղական բարձրաստիճան անձանց մօտ (փակագծի մէջ պէտք է ասենք, որ նա սիրված էր նաեւ իր շրջանի հասարակութեան մէջ) և թէ միւս պետութիւնների հիւպատոսների ու այլ ծանօթների մօտ, իսկ երեկ, ամսիս 14-ին, նշանակված է լինում նրա մեկնելը այստեղից:

Առաւօտեան գնացքի ժամանակ հիւպատոսին բարի երթ մաղթելու համար երկաթուղու կայարան են գալիս ֆրանսիական, Թիւրքական և այլ հիւպատոսները և ուրիշ շատ ծանօթ անձինք, նաեւ տեղիս ոստիկանապետը իր ստորադրեալներով. յատուկ բերված է լինում նաեւ զինուորական երաժշտութիւն. և այդ բոլորը սպասում են կայարանում միրզա Մամադ-խանի գալուն: Սակայն խփում են գնացքի երկրորդ զանգը, և նա դեռ չէ երեւում. Այդ միջոցին պարսկական հիւպատոսարանից մարդ է գալիս և յայտնում բոլորին, թէ ժողովուրդը չէ թողնում, որ հիւպատոսը Բաթումից հեռանայ, նա միաձայն աղաղակում է՝ «Նախ մեզ կոտորէք ու ապա հեռացէք մեզանից» և այլն:

Լսելով այդ, կայարանում սպասող բոլոր անձինք դիմում են դէպի հիւպատոսարան և տեսնում՝ իրաւ որ հազարաւոր մարդիկ շրջապատել են հիւպատոսարանը և աղերսագին աղաղակներով դիմում են միրզա Մամադ-խանին, որ նա չը զրկէ իրանց իր նման խաղաղարար, հոգատար և ամենքին էլ հաւասար չափով սիրող հիւպատոսից: Երբ յայտնի վաճառականներից մի քանիսը սկսում են խորհուրդ տալ շրջապատը սխալած ամբոխին, թէ աւելի յարմար կը լինէր, որ նախ թողնէին գնար հիւպատոսը և ապա օրինական ձեւով խնդիրներ ուղարկէին Թէհրան՝ հիւպատոսին կրկին յետ ուղարկելու համար,—ամբոխը գոռում է. «Ձենք ուզում նրա այստեղից հեռանալը. ով գիտէ նրա տեղը ո՞վ կուղարկեն, որ երկու, երեք օրից յետոյ այստեղ էլ այն հրէշաւոր գործողութիւնները սարքվեն, որպէս Բագուում, Գանձակում և այլն: Եթէ մինք մինչեւ այսօր կենդանի և խաղաղ կերպով մեր գործի վրա ենք, դա միրզա Մամադ-խանի շնորհիւ է. կեցցէ նա» և այլն:

Այսպէս թէ այնպէս, հիւպատոսի մեկնելը երէկ տեղի չունեցաւ և դեռ մնում է անորոշ: Երէկ գրեթէ բոլոր պարսկահպատակ ժողովրդի կողմից՝ առանց խտրութեան ազգի և կրօնի՝ մի երկար խնդիրք ուղարկվեց հեռագրով Թէհրան, աղերսելով իրանց չը զրկել միրզա Մամադ-խանի նման մի հոգատար և բարեհոգի հիւպատոսից: Նոյն իմաստով մի հեռագիր էլ ուղարկվեց նաեւ Պետերբուրգի պարսից դեսպանին և, որքան լսեցինք, նաեւ Թիֆլիսի հիւպատոսին: Առ այժմ դեռ ոչ մէկի պատասխանը չէ եկել: Հետեւանքի մասին կ՚ գրեմ:

Գ. Գրիգորեանց

ՏՕՆԱՀԱՆԴԷՍ Ի ՊԱՏԻՒ ԴԱԼԻ-ԱԼԻԻ

—

Օգոստոսի 14-ը գանձակեցիները դեռ երկար ժամանակ կը մտաբերեն: Առասպելական հերոս Դալի-Ալին, որ մի քանի տարենի շարունակ փախստական էր և մեղադրվում էր բազմաթիւ յանցանքներում, այդ օրը ներկայացաւ գեներալ-նահանգապետ Ալիխանովին: Ներկայանալը տեղի ունեցաւ մեծ հանդիսաւորութեամբ և ի վերջոյ ժողովրդական տօնահանդէս դարձաւ:

Ես պարտաւորս արժանի չեմ լինիլ, եթէ զբաղեցնեմ իմ ընթերցողների ուշադրութիւնը մեր երկրի պատմութեան մէջ հազուագիւտ այդ հանդէսի նկարագրութեամբ:

Դալի-Ալին քաղաք մտաւ առաւօտեան կառքով իշխան Գոլիցինի (նախկին կառավարչապետի եղբայրը) հետ միասին, որը քաղաքից մի քանի վերստ հեռու ունի մի մեծ խաղողի այգի և ընդարձակ գինեգործական տնտեսութիւն, որը և՞ խնդրել է ներումն շնորհել Դալի-Ալիին: Կառքը, շրջապատված տեղական Թուրք ձիաւորների շքախմբով, սլացաւ դէպի գեներալ-նահանգապետի բնակարանը, ուր այդ միջոցին հաւաքվել էին բէգեր, քաղաքացիներ, անուանի վաճառականներ և պարապմունքներից ազատ պաշտօնեաներ: Իշխան Գոլիցինը Դալի-Ալիին գեներալ Ալիխանովին ներկայացնելուց յետոյ, կարդացվեց բարձրագոյն ուկազը Դալի-Ալիին ներումն շնորհելու մասին: Շնորհաւորելով ապա բարձրագոյն գթութեան համար, գեներալ-նահանգապետը նրան ուղղած իր ճառով, ի միջի այլոց, յոյս յայտնեց, որ Դալի-Ալին մտադրութեան կը տայ իր անցեալը և կը սկսէ ապրել նոր խաղաղ կեանքով: Մինչև այդ գեներալ-նահանգապետի տան կից փողոցներում սկսեց հաւաքվել քաղաքացիների մեծ բազմութիւն, և երբ Դալի-Ալին դուրս եկաւ գեներալ-նահանգապետի բնակարանից իշխան Գոլիցինի ուղեկցութեամբ, ահագին ամբոխը օղակաձեւ շրջապատեց նրան և սկսեց շնորհաւորել այդ «բաղդաւոր օրվայ» համար, իսկ իշխ. Գոլիցինին շնորհակալութիւն յայտն

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՇՆՈՐՀՆԵՐԸ

(Վերջ)

Ասացէք, կաթողիկոսական կոնդակների հեղինակներ, դպրոցական գործը կրօնակա՞ն թէ ազգային ժողովրդական գործ է: Կասկած չունեմ, որ դուք և ձեզ հետ միասին թէեւս ներկայ բողէքում նաեւ կաթողիկոսը, որ ի դէպ, կոչւում է իրան ամենայն հայոց կաթողիկոս, որովհետեւ նա միմիայն լուսաւորչական և ոչ ամենայն հայերի կաթողիկոս է, անշուշտ կը պատասխանէք, թէ ի հարկէ «ազգային-ժողովրդական»: ասում եմ անշուշտ, որովհետեւ գիտեմ կամաչէք ժամանակից և չէք կամենայ բացարձակապէս սուտ՝ դպրոցը եկեղեցական—կրօնական հաստատութիւն հռչակելով. և եթէ այդպէս է՝ ինչպէս էք դուք զրկում կաթօլիկ և բողոքական հայերին հայկական մի կենտրոնական համաժողովի մասնակցելուց, ուր ամենագլխաւոր հարցը ազգային—ժողովրդական դպրոցների ապագայ կազմակերպութեան մտածմունքն է լինելու, դպրոցներ, որոնք հաւասարապէս պէտք է պատկանեն բոլոր ուսումնայիններին, ուր պէտք է ուսանի բոլոր հայերի մատաղ սերունդը, առանց լուսաւորչականի, կաթօլիկի կամ բողոքականի առանձնայատուկ դրոշմ կրելու:

Գիտեմ, դուք ինձ կառարկէք, թէ Էջմիածնի կենտրոնական ժողովում խօսվելու ու մտածվելու է լոկ այնպիսի դպրոցների մասին, որոնք պիտի ծառայեն հայ լուսաւորչական երեխաների կրթութեան գործին, իսկ հայ կաթօլիկներն ու հայ բողոքականները կարող են իրանց համար առանձին դպրոցներ բանալ իրանց սեփական դրամներով:

Հա՛, ձեր բերանով դատեցէք. ուրեմն հէնց այդ առարկութիւնից պարզ է, որ ձեր ապագայ դպրոցները լի ելու են լուսաւորչական եկեղեցական-ծխական դպրոցներ և ոչ ազգային-ժողովրդական, ինչպէս դուք կամենում էք հաւատացնել:

Եւ ուրիշ կերպ չի էլ կարող լինել. Էջմիածնում, լուսաւորչական հայ կաթողիկոսի ձեռնհասութեամբ միմիայն լուսաւորչական հայերից կազմված «կենտրոնական ժողովը» չէ կարող և իրաւունք չունի ծրագրելու ազգային-ժողովրդական դպրոցի ապագայ կազմը, մի կազմ, որ պիտի համապատասխանէ բոլոր հայերի պահանջներին, լինեն նրանք լուսաւորչական, կաթօլիկ, բողոքական, թէ չը պատկանեն և ոչ մի դաւանութեան. դուք մոռացե՞լ էք. այս վերջին տեսակի հայեր էլ կան. և նրանց թիւը քիչ չէ հէնց այժմ, ու գնալով հետզհետէ կը բազմանայ. նրանք այժմ լոկ անունով լուսաւորչական, կաթօլիկ կամ բողոքական են, բայց իսկապէս չեն պատկանում և ոչ մի ծխի, չեն ընդունում իրանց տանը ոչ մի քահանայ, չեն խոստովանում ու հաղորդվում, որովհետեւ իրանք են իրանց տան և ծխատէրն ու խոստովանահայրը, և կարիք չեն զգում ոչ խոստովանութեան և ոչ հաղորդութեան՝ դուրս կանգնած լինելով այդ ամենից. բայց և այնպէս նրանք հայ են, զուտարիւն հայ և ուրախութեամբ կուղարկէին իրանց երեխաներին հայ ազգային-ժողովրդական դպրոց, եթէ այդպիսին գոյութիւն ունենար, բայց չեն ուղարկի երբէք դաւանական եկեղեցական-ծխական ուսումնարան, ուր լուսաւորչական քահանան, կաթօլիկ վարդապետը կամ բողոքական պաստորը պիտի լցնեն փոքրիկ մանուկների գլուխը ամեն տեսակ յիմարութիւններով:

Կասկած չունեմ, որ կաթօլիկ և բողոքական ուսեալ հայ առաջադէմ տարրը ուրախութեամբ կը միանայ այն լուսաւորչականներին, որոնք կը կամենային ընդհանուր ազգային—ժողովրդական դպրոց ունենալ և այդ ազգային-ժողովրդական ընդհանուր դպրոցը կը լինէր իսկական միութեան այն կապը, որ յիրաւի ընդհանուր շահերով կը շաղկապէր դաւանական բաժանված եղբայրներին. մեր մանուկները միասին կուսանէին, միասին կը սովորէին սիրել գիտութիւն, ժողովուրդ, աշխատութիւն, միասին կը փայփայէին ապագայ յոյսեր... Ապա թէ ո՞չ ինչ նշանակութիւն ունենին այն կեղծ ու պատիր, այն ստայօդ ֆրազները, որոնցով լուսաւորչական, կաթօլիկ և բողոքական հայերը աշխատում են փոխադարձաբար սիրաշահել իրար, եթէ նոյն իսկ դպրոցը ընդհանուր չէ լինելու. էլ ինչացու «եղբայր ենք մենք», երբ մեր որդիքն անգամ մանկական վաղ օրերից մէկ տեղ չեն խաղալու և ուրախանալու, որպէս զի ապագայում մէկ տեղ էլ կռիւ մղեն ընդհանուրի երջանկութեան համար:

Ծխական համախմբումը ժողովրդական համախմբման ձեւերից ամենավատը, ամենանեղն ու ետականն է. նա ինքն իրան մէջ պարունակում է արդէն կրօնական խտրութեան և անհամբերողութեան ոգի. նա յաճախ կոյր է և ատեցող, թշնամի ուրիշ ծխերի, եթէ այդպիսիները գոյութիւն ունենան նոյն ազգի մէջ: Նրա որոշումներն ու վճիռները, որքան էլ ազատամիտ երեւան ըստ արտաքինին, միշտ իրանց մէջ պարունակում են կրօնական ձուածութեան և դաւանական ինքնասիրահարութեան վարագուրված տենդենցիաներ. իսկ երբ նրանք վերաբերում են ընդհանուր ազգի շահերին, ազգի, որ բաղկացած է զանազանատեսակ կրօնական ծխերից, ուղղակի ապօրինի են և վնասակար:

Եւ ինչն է ստիպում մեզ արհամարհել Ռուսաստանի հայութեան ընդհանրութիւնը, առ ոչինչ համարել 100,000 հայ կաթօլիկների և բողոքականների գոյութիւնը և լոկ լուսաւորչական ծխերի ընտրութեամբ, այն էլ այնպիսի սոսկալի ընտրութեամբ, ինչպիսին տեղի ունեցաւ մեզանում, «կենտրոնական» ժողով կազմել Էջմիածնում ազգային-ժողովրդական դպրոցների ապագայ բաղդը վճռելու. չէ՞ որ հէնց այդ վճիռն իր մէջ պարունակում է և ապօրինութիւն, և մեծամտութիւն, և ազգային-ժողովրդական շահերի սխալ ըմբռնումն և կրօնական նեղ ու գձուծ հաշիւներ: Այդ վարմունքն ինքն ըստ ինքեան խիստ պերճախօս է. նա ասում է. Ռուսաստանում իսկական հայերը մենք՝ լուսաւորչականներս ենք, իսկ կաթօլիկները կամ բողոքականները —նրանք... նրանք կէս-հայ են կամ աւելի եւս լաւ... ֆրանգ են ու նէմէց: Շնորհաւորում եմ ձեզ, «իսկական հայեր», արդեօք շատ հեռու էք գնացել դուք «իսկական ռուս» մարդուց:

Ահա կաթողիկոսական «շնորհներից» մէկի հետեւանքը—բաժանումն ազգային-ժողովրդական դպրոցի ըստ դաւանութեան:

Եւ ապա՝ կալուածները. ո՞ւմ սեփականութիւնն էք վերցնում և ո՞ւմ տալիս. դուք կամենում էք վերցնել ազգային ժողովրդական ստացուածքները լուսաւորչական եկեղեցուց և տալ լուսաւորչական եկեղեցական ծխին, որ միշտ լինելու է կղերի ազդեցութեան տակ: Երեւելի՜ յեղափոխութիւն: Դուք, լուսաւորչական հայեր, կարո՞ղ էք ապացուցանել, որ ազգային ինչքն ու ստացուածքը միմիայն ձեզ են պատկանում և ոչ նաեւ կաթօլիկ ու բողոքական հայերին. կարո՞ղ էք ապացուցանել, որ յատկապէս ձեր և ոչ կաթօլիկների ու բողոքականների նախնիքն են թողել այն ահագին հողային հարստութիւնները, որոնցից շատերը թէ մեզանում և թէ Տաճկա-Հայաստանում դեռ նախաքրիստոնէական ժամանակների մեհենական սեփականութիւններ են: Պառակտման սև օրերում, գիտեմ, դուք ստոր մեծամասնութիւն էիք կազմում և դաւանամոլի զզուելի քինախնդրութեամբ զրկեցիք ձեր այլադաւան եղբայրներին՝ ազգային ընդհանուր սեփականութիւնները դնելով միմիայն ձեր կղերի տրամադրութեան տակ: Դուք կողոպտեցիք ձեր հարազատներին և մերկ ու տկլոր դուրս վռնդեցիք հայրենի ժառանգութիւնից: Գիտեմ նաեւ այն, որ անցել են արդէն դարեր ազգային ընդհանուր գոյքերի յափշտակութեան օրերից. ձեր կղերը փառաւորապէս կեր ու պարարտացաւ, կերաւ ու փառք տուեց Աստծուն, «բարեաց պարգեւողին», որ միմիայն իրան մնաց վայելելու անիրաւ յափշտակութեան արդիւնքը. գիտեմ, որ դուք էք այժմ ազգային ընդհանուր սեփականութիւնների բացարձակ և միայնակ տէրը ու ոչ մի կաթօլիկ կամ բողոքական հայ, յիշելով անցեալը, չի էլ կամենում բերան բաց անել հայրենի ժառանգութիւնների կորստեան մասին. բայց և այնպէս... ինչ է ասում ձեր խիղճը, ազգային-ժողովրդական ստացուածքները, խլելով լուսաւորչական կղերի ձեռքից, չը պէ՞տք է վերադարձնել ազգի ընդհանրութեան. չը պէ՞տք է ուղղել անցեալի սխալը ու գէթ դարերից յետոյ քաւել մի ժամանակ հարազատ եղբօր դէմ գործած սոսկալի անիրաւութիւնը:

Հայութիւնը մէկ է և նրա ազգային-ժողովրդական դպրոցն էլ, կալուածք ու ստացուածքներն էլ մէկ պէտք է լինեն: Սա ոչ միայն բողոքող արդարութեան, այլ և ժամանակի գործնական անհրաժեշտութեան պահանջ է:

Բայց դուք գնացիք սխալ ճանապարհով. կեանքի արմատական փոփոխութիւնների ժամին, երբ պէտք էր շուռ տալ ամեն ինչ հնի դառն իրականութեան մի դեղ ու դարման գտնելու համար, երբ պէտք էր բանել ձախակողմեան կտրուկ ճանապարհը, դուք բռնեցիք միջնադարեան կրօնամոլի ուխտագնացութեան ուղին և վազեցիք Էջմիածին:

Տիրացու պապերի տիրացու զաւակներից ինչ պէտք էր սպասել...

—

Ու ես չը գիտեմ՝ ինչ պէտք չինէ այժմ Էջմիածնի կենտրոնական ժողովը, հայութեան մի մասի այդ թերի կրօնական-դաւանական ներկայացուցչութիւնը, որպիսի բարի դիտաւորութիւններով ու զուտ աշխարհիկ նպատակներով էլ օժտված լինեն նրա պատգամաւորները: Ակներեւ է, որ ծխական ընտրութիւնների միջոցով և լուսաւորչական եկեղեցու պետի հրաւէրով ժողովվելով Էջմիածին՝ մտնելով կղերի պատմական հեղինակութեան և անցած յիշատակների լաբիրինթոսը՝ նրանք անկարող պէտք է լինեն հրաժարվել միանգամ ընդ միշտ այդ անցեալից և խլել ժողովրդական դպրոցն և ժողովրդական ստացուածքները կղերի բռնուկ ճանկերից՝ ազգի ընդհանրութեանը յանձնելու դիտաւորութեամբ: Նրանք ստիպված պէտք է լինեն թողնել ամեն ինչ նոյն դրութեան մէջ, ինչպէս և կար առաջ, բաւականանալով մանր-մունր և ապագայի համար բոլորովին նշանակութիւն չունեցող կարկատան-բարենորոգումներով:

Ինձ կասեն, որ այլապէս չէ էլ կարող լինել. հեշտ է ասել՝ հրաժարվել անցեալից, բայց ինչպէս հրաժարվել, քանի այդ հազարամեայ անցեալը հազար ու մի հանգոյցներով խճճված է ներկայի հետ, հանգոյցներ, որոնք կապում, կաշկանդում են մեր ձեռ-

Դալի Ալիի ներմանը աջակցելու համար։ Այդտեղ իշ. Գօլիցինը մի համառօտ ճառով դիմեց ժողովրդին և նկարագրեց Դալի-Ալիին, իբրև մի «ազնիւ և լաւ» մարդու, անուանեց նրան նոյն իսկ «ժողովրդական հերոս»։ Դրանով վերջացաւ փողոցային հանդէսը, և ի պատիւ Դալի-Ալիի պատրաստուած տօնահանդէսը տեղափոխվեց հիւրանոց, ուր պատրաստուած էր նախաճաշ հրաւիրված հիւրերի, տեղական կալուածատէրերի և մուսուլման առևտրականների համար, որոնց թւում գտնվում էին Ալեքպեր-օղլի Ռաֆիբեգօվը, երդ.-հաւատ. Խասմամեդօվը, հարկային տեսուչ Սուլթանօվը և այդ հանդիսին հրաւիրված երեք հայեր։ Հանդէս եկաւ շամպանիան, արտասանվեցին ճառեր, կենացներ և բարեմաղթութիւնները։ Նախաճաշից յետոյ Դալի-Ալին իշ. Գօլիցինի ուղեկցութեամբ երկրորդ անգամ այցելեց գեներալ-նահանգապետին, ապա մէչիթ գնաց, աղօթեց ու այնտեղից դուրս գալով իշ. Գօլիցինի հետ միասին վերադարձաւ վերջինիս կալուածքը։ Ամէն տեղ ճանապարհին ահագին ամբոխը դիմաւորում էր Դալի-Ալիին ցնծութեան բացականչութիւններով և ձեռքերի վրա առնելով ճօճում էր։ Դալի-Ալին էլ ետ չէր մնում ամբոխից նուիրելով վերջիններիս փողեր «քէֆ» անելու համար։

(«Тиф. Ли.»)

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

VII

Վարչական կազմ եւ պաշտօնեաներ

Մի կողմ թողնելով այն մօդայական պահանջը, որ մեր նորելուկ գործիչները լոյս աշխարհ են նետել իրանց մանդատներում—խօսքս եկեղեցին ժողովրդից բաժանելու մասին է—պիտի նայենք եկեղեցական աշխարհի վրա իբրև աւետարանական սիրոյ և հաւասարութեան հոգով ապրող, շնչող և ընթացող անդաստակարգ մի եղբայրութեան, մի հասարակութեան, մի համայնքի վրա։

Այս եղբայրութիւնն իր ամբողջ բարեկեցութիւնը անսայթաք առաջ վարելու համար ունի իր ընդհանուր ժողովները, ինչպէս գրեցի նախընթաց գլուխներում, այս ժողովների կողմից ընտրված խորհուրդները։

Ժողովները, լինեն նրանք ծխական, թեմական պատգամաւորական թէ կենտրոնական և թէ համազգային, պարբերական են։ Սրանք ժողովվում են որոշեալ ժամանակներում և որոշեալ խնդիրներ վճռելու, հրահանգներ կազմելու, խորհրդի անդամներ, քահանայացուներ, առաջնորդացուներ ու հայրապետացուներ ընտրելու, այլ և այլ նախահաշիւներ քննելու և հաստատելու համար. իսկ ընթացիկ գործերը վարում են տեղում ծխական հոգաբարձութիւնները, թեմում՝ թեմական խորհուրդը (կոնսիստորիա), կենտրոնում՝ կենտրոնական խորհուրդը (սինոդ)։ Բացի սրանցից կան և այլ պաշտօնեաներ, ինչպէս խորհրդարաններում պաշտօն վարողներ և դուրսը շրջանային տեսուչներ և այլն։

Ինչպէս խորհուրդներն ընտրվում են ընդհանուր ժողովների կողմից և պատասխանատու են իրանց ընտրողների առաջ, այնպէս և խորհրդարաններում պաշտօն վարողները և շրջանային տեսուչները ընտրվում են խորհուրդների կողմից և պատասխանատու են իրանց ընտրողների առաջ։

Ծխական հոգաբարձութիւնը, կազմված առնուազն 5 անդամից, պիտի բաղկանայ այնպիսի անձերից, որոնք իրանց միաբան մտածողութեամբ հանդիսանան մի հասուն ամբողջութիւն, որպէս զի ձեռնհասօրէն կարողանան թէ կառավարել եկեղեցու այլ և այլ հաստատութիւնները—դպրոցներ, ընթերցարաններ, լսարաններ, հիւանդանոցներ, անկելանոցներ—թէ տեսնել ու պարզել եղբայրութեան մէջ տեղի ունեցող դատերն ու գժտութիւնները և թէ կարենան հոգալ ու առաջ վարել ծխական տնտեսութիւնը և վերահսկողութիւնը։ Ուրեմն ծխական հոգաբարձութեան անդամները պիտի լինեն թէ իրանց գիտութեան, թէ ժրաջանութեան, թէ բարոյական կողմերից արժանաւոր և վստահելի անձեր։

Այսպէս և մանաւանդ թեմական խորհուրդները։

Որովհետև թեմի բոլոր եկեղեցական այլ և այլ հաստատութիւնների ու պաշտօնեաների կառավարիչն է իսկապէս թեմական խորհուրդը, ուստի և պէտք է սրա լաւ և նպատակայարմար կերպով կազմելու մասին առանձնապէս հոգալ։ Սրա անդամները կարող են լինել 4—6 հոգի, պիտի որոշ տարբերջանում վարէին պաշտօն որոշ վարձատրութեամբ։ Պիտի բաղկացած լինի այնպիսի մասնագիտական հմտութիւն, գիտութիւն, փորձութիւն ունեցող անձերից, որպիսի մասնագիտական հաստատութիւններ կան թեմի եկեղեցական աշխարհում։

Թեմական խորհուրդը կունենայ իր առանձին բաժանմունքները՝ կրօնական, դատաստանական դպրոցական-կրթական և տնտեսական։ Իւրաքանչիւր մի բաժանմունքի գլխին կանգնած կը լինի խորհրդի անդամներից մէկն ու մէկը, նայած թէ որն աւելի որին համապատասխան կը լինի իր գիտութեամբ ու հմտութեամբ. բայց բոլոր բաժանմունքների վերաբերութեամբ էլ վճիռներ կարձակվեն, կարգադրութիւններ կը լինեն ընդհանուր խորհրդով ու վճռով։

Ծխական հաստատութիւնների մէջ պաշտօնեաներ ընտրելու ու արձակելու իրաւունքը ծխական հոգաբարձութեան ձեռքին լինելու հետ, պէտք է որ այդ պաշտօնեաների դրութիւնը կամայականութիւնից որքան կարելի է զերծ պահելու համար և վիճակներն առաւել կայուն և յուսալի պայմանների մէջ դնելու համար՝ մի տեսակ կախումն սահմանել թեմական խորհրդից, այսինքն՝ սահմանել որ այդ պաշտօնեաների թէ պաշտօնի մէջ մտնելը և թէ արձակելը հաստատվելու պահանջ ունենայ թեմական խորհրդից։ Ամէն անգամ ինչպէս մէկի պաշտօնի հրաւիրվելու կարիքների, արժանաւորութիւնների, այնպէս և պաշտօնից հեռացնելու պատճառների մասին հաղորդագրվի խորհրդին և սպասվի նրա որոշմանը։ Պէտք է վերջ դնել, դիցուք, դպրոցական հոգաբարձուների կամ տեսչի փոխվելու հետ՝ ամբողջ ուսուցչական խումբ արձակելու մերօրեայ կամայականութիւններին։

Իւրաքանչիւր մի եկեղեցի՝ տաճար պիտի ունենայ իր որոշեալ թւով ծխական ժողովուրդը, իր քահանայական, դպրական և այլ սպասաւորների որոշ շտատը (թիւ և տարեկան ռոճիկ յայտնի պատկերով), կազմված ծխական ընդհանուր ժողովից և հաստատված թեմական պատգամաւորական ժողովից։ Այո, հաստատված այս ժողովից, իբրև հաստատող տարեկան նախահաշիւների։

Այսպէս և իւրաքանչիւր մի դպրոց, ընթերցարան, լսարան և այլն պիտի ունենան իրանց որոշ շտատները։ Ամէն մի եկեղեցի, իբրև մի աւտօնոմ միութիւն, կարող է և ազատ է բանալու և ունենալու իր կարևոր ճանաչած հաստատութիւնը, բայց և ամէն անգամ ստանալով թեմական իշխանութեան հաւանութիւնը, թեմական կազմի ամբողջական ներդաշնակութիւնը, համակամութիւնը պահած և հանրական շահերը չը խախտած լինելու նպատակով։

Խօսելով փոխանորդների և հոգևոր կառավարութիւնների մասին, մեր կողմից դատանք աւելորդ, աննպատակ և ի զուր տեղ բռնող. այժմ միևնոյնը պէտք է ասենք մեր գործակալների մասին։

Քանի որ ծխերի թիւն աւելացնելով և քահանաների թիւը պակասեցնելով, մեր քահանաները միջոց չեն ունենալ այլ ևս կողմնակի տեսական աշխատանք և շատ ժամանակ խլող պաշտօններ վարելու և քանի որ գործակալութիւնը զուտ վարչական պաշտօն է և չէ պահանջում անպատճառ, որ վարողը հոգևոր աստիճան ունեցող անձն լինի, մենք կառաջարկէինք միացնել գործակալութիւնը շրջանային տեսչութեան պաշտօնի հետ։ Այս նպատակով, իւրաքանչիւր մի թեմ կարելի կը լինի բաժանել մի քանի շրջանի, և թեմական խորհուրդն իր կողմից կը նշանակի շրջանային տեսուչներ, որոնց վրա կը դրվի պարտաւորութիւն վերահսկելու ծխական բոլորատեսակ հաստատութիւնների ընթացքի վրա։

Շրջանային տեսուչները պէտք է լինեն կրթված, մանաւանդ ուսումնարանական ասպարէզում փորձված հմուտ անձեր։ Սրանց վրա առաւել ևս պէտք է ծանրանան դպրոցական խնդիրները։ Սրանք իբրև շրջանի տեսուչներ պէտք է ել ու մուտ անեն դպրոցները, պէտք է հսկեն ծխական հաստատութիւնների և սրանց ունեցած իսկ եկեղեցու պաշտօնեաների վրա, կարևոր ժամանակ ժողովներ կազմեն, տեղական այլ և այլ խնդիրներ ուսումնասիրեն, ծրագիրներ մշակեն ու ներկայացնեն թեմ. խորհուրդներին։

Այսպիսով շրջանային տեսուչները հանդիսանում են թէ վերահսկիչներ թեմական իշխանութեան կողմից թեմի մէջ գոյութիւն ունեցող բոլոր ծխական հաստատութիւնների ընթացքի և սրանց մէջ պաշտօնակատարողների գործունէութեան նկատմամբ, թէ ներկայացնում են իրանց դիտողութիւնները տեղական մարմինների ու ժողովների քննադատութեանը և թեմական խորհրդի բարեհայեցողութեանը և թէ լինում են տեղական կարիքների, իղձերի թարգմաններ աւելի բարձր իշխանութեան առաջ։

Երրորդ և բարձրագոյն ինստանցիան դառնում է կենտրոնական խորհուրդը (սինոդ) ընտրված կենտրոնական պատգամաւորական ժողովի կողմից։ Այս խորհուրդը բաղկացած կը լինի 6—8 անդամից։ Սրանք իբրև պաշտօնեաներ կը ստանան որոշ ռոճիկ։ Սրանք պիտի լինեն այնպիսի կրթութեան, գիտութեան ու հմտութեան տէր անձեր, որ ձեռնհասօրէն կարողանան վարել ռուսահայ եկեղեցական աշխարհն իր բոլոր հաստատութիւններով ու պաշտօնեաներով ըստ ամենայնի համաձայն ազգային ընդհանուր ժողովի սահմանած օրէնքների ու կենտրոնական ժողովի տուած հրահանգների։

Այս կենտրոնական խորհրդի մէջ ևս պիտի լինեն կրօնական, կրթական, դատաստանական ու տնտեսական և վանական բաժանմունքներ իրանց դիւաններով։ Այստեղ ամէն մի բաժանմունքի ղեկավարութիւնը պիտի յանձնված լինի առանձին անդամի, բայց վճիռները պիտի արձակվեն ընդհանուր խորհրդակցութեամբ։

Թեմական խորհուրդների յարաբերութիւնները դէպի կենտրոնականը նոյնն են, ինչ որ ծխական եկեղեցունը, հոգաբարձութեանը դէպի թեմական խորհուրդը՝ իւրաքանչիւրը իր շրջանին վերաբերեալ խնդիրներում։

Թեմական խորհուրդներն ունեն իրանց ատենապետը ու թեմակալ առաջնորդ նախագահը։ Սրանցից առաջինն ընտրվում է խորհրդի անդամների կողմից իրանց միջից, իսկ վերջինը՝ նախագահը է ինքը առաջնորդն ի պաշտօնէ։

Կենտրոնական խորհուրդն ունի իր ի պաշտօնէ նախագահը ի դէմս ս. Էջմիածնի ծայրագոյն պատրիարքի և իր ատենապետը ընտրված իր միջից իր կողմից։

Կենտրոնական խորհուրդն է գերագոյն վերահսկողը թեմական ընդհանուր գործերի իր կողմից ուղարկված անդամների կամ յատուկ վերատեսուչների միջոցով։ Սա է գլխաւոր վերահսկողը ռուսահայ բարձրագոյն ու միջնակարգ դպրոցների իր ձեռքի տակ ունեցած դպրոցական բաժանմունքի կամ ուսումնական խորհրդի միջոցով։

Մեսրոպ ա.-ք. Մելեան

Բաթում

ՇՈՒՐՋԲԱԼԹԵԱՆ ԵՐԿՐԻ ՎԻՃԱԿԸ

Ութնամեայ կռիւը յեղափոխութեան դէմ Շուրջբալթեան երկրում հետևեալ վիճակն է ստեղծել։ Պատժական արշաւախմբերի աշխատանքները վերջանալու մօտ են։ Ամբողջ այդ երկրի տարածութեան վրա հազիւ թէ կարելի լինի գտնել մի անկիւն, ուր դեռ ոտք դրած չը լինի «պատժողը»։ Այն բոլորը, ինչ որ կարող էր այրվել, արդէն այրվել է. ինչ որ կարող էր ոչնչանալ՝ ոչնչացրած է արդէն։

«Յեղափոխութիւնը ճնշված է, թշնամին ջարդված»—կարող էր զեկուցանել գեներալ Սօլլօգուբը, անվրդով կերպով իր պատուհասող սուրը դնելով պատեանում։ Օրլօվը կարող էր առաջվայ նման զուարճանալ ժամանակաւոր հանգստութեամբ, իսկ երկրում ցիր ու ցան մանր զօրախմբերը կազմակերպված յարձակումների փոխարէն կարող էին զբաղվել առանձին կրամօյլնիկների վրա մանր որսորդութիւն անելով։ Բայց եթէ փորձելու լինենք ի մի ամփոփել այն բոլորը, ինչ որ արվել է ութ ամսվայ ընթացքում, կը տեսնենք, որ կրամօլան ոչ միայն չէ ճնշված, այլ, ընդհակառակը, այդ ժամանակամիջոցում սովորականից աւելի է զարգացել, ծաղկել։ Տեղական լատիշական պրօլետարիատը և անհող գիւղացիութիւնը, որ պատժական գործողութիւնների առաջին օրերում իրանց գլուխը մի փոքր կորցրել էին, շատ շուտով գրաւեցին նոր դիրքեր, վերջնականապէս միացան իրար հետ ազատագրական կռիւ մղելու։

Լիբաւայում պատժողական շրջանի սկզբում լատիշական սօցիալ-դեմօկրատական կազմակերպութիւնը ունէր իր շարքերում ընդամենը 150—200 անդամներ։ Մինչդեռ ներկայումս միայն յիշեալ քաղաքում նրանց անդամների թիւը 800-ից աւելի է։ Այդ 800 հոգին պարզ բան է աւան-գարդն է միայն տեղական միացեալ լատիշական կազմակերպութիւնների, որոնք իրանց շարքերում ունեն 10,000 հոգուց աւելի կազմակերպված բանւորներ։

Լատիշական սօցիալիստ լրագիրները այդ ժամանակամիջոցում սկսեցին տարածվել չը տեսնված մեծ քանակութեամբ և վերջնականապէս հարուածեցին չափաւոր մամուլին։

Միտինգները գործարաններում անցնում են, մեծ աշխուժութեամբ և բազմամարդ կերպով քան անցած տարի այս ժամանակ։ Մասսայի տրամադրութիւնը օրէցօր աւելի ու աւելի է գրգռվում։ Նաւահանգիստներում աշխատող բանւորները միտինգներ են կազմում բաց երկնքի տակ։ Գիւղերը միացել են և հետզհետէ աւելի են համախմբվում որոշ լօզունգների շուրջը։ Գաղտնի ոստիկանները և լրտեսները, որ ազատ ասպարէզ ունէին պատժողական արշաւախմբերի ժամանակ, անողորմ կերպով ծեծվում են մասսայի ձեռքով, իսկ այդպիսի վիրաւորներին եթէ հիւանդանոց են տանում, այնտեղի ստորին ծառայողները հրաժարվում են որևէ օգնութիւն ցոյց տալ։

Լատիշականի հետ միաժամանակ, զարգանում են և հիմնաւորվում նոյնպէս տեղական ռուսաց սօցիալիստական կուսակցութիւնները, նմանապէս և «Բունդը»։

Այդ բոլոր կազմակերպութիւնների միացեալ կօմիտէտում մասնակցութիւն ունի նոյնպէս և «զինւորական կազմակերպութիւնը»։ Նաւահանգստում յաճախ տեղի են ունենում զուտ նաւաստիների միտինգներ մի քանի հարիւր հոգու մասնակցութեամբ։

Վերջապէս, միջին տեսակի բնակիչները, որոնք որևէ յոյս էին դնում Դումայի վրա, այժմ, նրա արձակումից յետոյ արդէն բոլորովին կորցրին իրանց յոյսերը, որ հնարաւոր է այսուհետև որևէ խաղաղ ելք և մասսայաբար մտնում է յեղափոխական դիրքերը։

(«Volkszeitung»)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաթում, 14 օգոստոսի

«Զանգ» լրագրի № 3-ի մէջ մի նամակ կար Բաթումից «Մակարեան» ստորագրութեամբ։ Պ. Մակարեան, իբրև հաւատարիմ հետևող դաշնակցական տակտիկայի, մի խօսքով «վայր ի վերոյ» անունն է տալիս մեր յարուցած «բազմաթիւ» հարցերին ու օձիքն ազատում նեղ վիճակից։ Կեցցէ գրական ըմբիշը։

Ինձ մեղադրում է պ. Մակարեան, որ «մեծ թուլութիւն եմ զգում դէպի Մելեան քահանայի անձնաւորութիւնը»՝ շատ տեղ տալով իմ նամակում*)։ Ճիշտ նոյնքան մեծ, որքան փարաջաւորներին «ձրիակեր» անուանող Մակարեան միշտ «մեծ թուլութիւն է զգացել դէպի Մելեան քահանայի խոհանոցը»։ Զզուելի է, երբ «ձրիակերութեան» խօսք են անում նրանք, որոնք, ինչպէս յայտնի է ամբողջ Բաթումին, քթերի ծակերը լայն բաց արած՝ հոտ են առնում թէ ո՛ր օրը, ո՛ւմ տանը փաչայ, փլաւ ու հէրիսա կայ պատրաստ, որ ներս ընկնեն ուտելու։

Պ. Մակարեան, որ ջղային ցնցումներ է է ստանում, երբ ամէն անգամ «Դաշնակցութեան» մասին խօսք ու զրոյց է լինում, այս անգամ էլ հիստերիկայով բռնված, մեզ «պրօվօկատոր» է անուանում, որ մենք մեր յօդուածում գրել էինք՝ «խեղճ տաճկահայ, գնա և յոյս դիր այդպիսի պաշտպանների վրա»։

«Օ՜ պրօվօկատոր, — աղաղակում է Մակարեան—տաճկահայը շատ լաւ է ճանաչում իր բարեկամին ու թշնամուն»։ «Տաճկահայերը իրաւամբ զայրացած են»—կրկնում է մեր խօսքերը և հաստատում, ասելով—«այո, զայրացած են, բայց ո՛ւմ դէմ»... հարցնում է պ. Մակարեան։ Յետոյ, մի քիչ շունչ առնելով,—աղաղակում է՝ «Ձեր պրօվօկատորական յօդուածի դէմ»։

Սթափվեցէք, սթափվեցէք, «ազգային մեր անմահ հերոսների յիշատակն ու գործերը շահագործող» մեծմոններ։ Ամօթ է. մի մարդ, որ ինքը հարց է տալիս,—պիտի պատասխանը ինքը չը տայ, այլ ուրիշից սպասի։

Տաճկահայը միթէ մեր յօդուածի դէմ զայրացած լինելուցն էր, որ դեռ այն լոյս չը տեսած, թևից բռնել հեռացրել էր կաֆէյից դաշնակցական ձեր դասախօսին։

Տաճկահայը միթէ մեր յօդուածի դէմ զայրացած լինելուց էր, որ հեռացրել էր իր ընկերութիւնից ձեր կօմիտէի նախագահին։

Տաճկահայը մեր յօդուածի դէմ զայրացած լինելուցն է, որ «շատ լաւ ճանաչելով իր բարեկամին ու թշնամուն» խմբապետական ժողով է գումարում այսօր և խիստ արգելում է ոտք դնել այնտեղ դաշնակցական մարմնի որևէ անդամին կամ դասախօսին։

Տաճկահայը և խմբական թէ խմբապետական ժողովը ձեր ապիկարութեան վկայականը կնքել է նրանով, որ արհամարհելով ձեզ, դիմել և պահանջել է իր «Սեպուհին», և չէ կամենում այլ ևս իր երկրի բաղդ ու վիճակի որոշելը թողնել ձեր ձեռքում։

Ամիսներ ու շաբաթներ ձեր դասախօսներով ճիգ ու քրտինք էք թափում սօցիալական հողի վրա, բայց տաճկահայը հաւատարիմ իր հողին ու ջրին, հաւատարիմ իր Սերոբներին, Մարտիկներին, չէ կամենում «ազգային» կուռին միա բարև տալ ու «դասակարգերի» մէջ իր ազգութիւնը թաղել։

Դադարեցէք ձեր անձնական ապիկարութեան, ձեր թայֆայականութեան դէմ ուղղած դատաստանը նահատակ ու կենդանի հերոս գործիչներին վերագրելու վատթարութիւնից։

Սթափվեցէք, և, եթէ խելքի ու խղճի նշմարանք կայ ձեր մէջ, հեռացրէք անարժանօրէն տիրած ձեր դիրքերից, այլապէս քայքայման ուրուականը երևում է։

Բաթումցի

Ծանօթ.— Մելեան քահանայի անձնաւորութեան վերաբերմամբ պատուիրակների ժողովը ևս նոյն թուլութիւնն է ունեցել իր արձանագրութեան մէջ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասի Փոխարքան յայտնել է վրաց սինօդալնի գրասենեակին, որ մօտ օրերս Ռուսաստանից Թիֆլիս կը գայ Վրաստանի համար նշանակված էկզարխ Նիկօնը։

—

Թիֆլիսի ժամանակաւոր գեն.-նահանգապետի կարգադրութեամբ «Отголоски» լրագիրը դադարեցված է։

—

«Նոր Խօսք» լրագիրը լսել է, որ Դաշնակցութեան ընդդիմադիր մասը՝ որ արտայայտվել է Մռաւեանի «Ժամանակ է սթափվելու» գրքով, մտադիր է իր առանձին պարբերական օրգանը հրատարակել։

—

Համալսարան իբրև ազատ ունկնդիր մտնել ցանկացող խնդրատուների մէջ կան մի քանի քահանաներ։ Նրանց մեծ մասը ցանկանում է մտնել պատմական լեզուաբանական ֆակուլտետը։ Ազատ ունկնդիր մտնել ցանկացողների մէջ բաւականին թւով կանայք կան։ Առ այժմ նրանց խնդիրները ուշադրութեան չեն առնվում որովհետև մինչև այժմ դեռ ևս չէ պարզված, թէ ինչ պայմաններով պէտք է ընդունվեն համալսարան կանայք։

—

Երէկ, ցերեկվայ ժամը 1-ին, Հալաբարում սպանել են ոստիկանական 7-րդ մասի թաղային վերակացու Պօլէդօվին։

—

Ինչպէս լսել է «Эхо Кавказа» լրագիրը, բոլոր հոգևոր և թեմական դպրոցները ներկայ տարվանից կօգտվեն ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան միջնակարգ դպրոցների իրաւունքներից, որով հոգևոր դպրոցների աշակերտներին իրաւունք կը տրվի մտնել գիմնազիա։

—

Երէկ, ցերեկվայ ժամը 11-ին, Պուշկինսկայա փողոցի վրա քաղաքային մսի խանութների մօտով անցնող՝ Վերայում գտնվող «Էդէմ» այգու կառավարիչ Բէսօ Բաքրաձէի վրա մի անյայտ չարագործ ատրճանակով կրակել է, և սպանել նրան։ Գնդակը դիպել է ձախ կողքին։ Դիակը ուղարկված է Միքայէլեան հիւանդանոցը։

—

Կովկասից շտապով Պետերբուրգ են գնացել գեներալներ Միշչենկօ և Ռեննենկամպֆը։ Գեներալ Միշչենկօն նոյնիսկ հնարաւորութիւն չէ ունեցել օգտվել իր առողջութիւնը վերականգնելու համար տրված արձակուրդից և բժշկվել Կիսլօվօդսկում, ուր մտադիր էր մնալ դեռ երկու շաբաթ էլ։ Այդքան շտապ գնալը, ինչպէս ասում են, կապ ունի բարձր շրջաններում կազմված նոր ծրագիրների հետ, որով ուզում են յիշեալ գեներալներին նոր պաշտօններ յանձնել։ («Око»)։

—

Օգոստոսի 24-ին Քութայիսի բանտից աքսորվում են Արխանգելսկի նահանգը դարձեալ 8 հոգի։ («Շր.»)։

—

«Le Temps»-ը պնդում է, որ պ. Ստոլիպինի վճռած հարցերից առաջինը հրէական հարցն է լինելու։

—

«Իսկական ռուս մարդկանց միութիւնը» եռանդուն պատրաստութիւններ է տեսնում առաջիկայ Պետական Դումայի ընտրութիւնների համար։ Բժիշկ Դուբրօվին ամենայն օր տասնեակներով հեռագիրներ է ստանում Ռուսաստանի զանազան մասերից իրերի դրութեան և միութեան ապագայ գործունէութեան մասին։

—

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ մինչև օրս Բագուի, Բիբի-Հէյբաթի և Բալախանի-Սաբունչիի բայոնների գործադուլները շարունակվում են, Բագուի գեներալ-նահանգապետ Ֆադէևը, փոխարքայի տուած ցուցմունքների համաձայն, հարկաւոր է համարում հրատարակել հետևեալ պարտադիր կանոնը. «Այն բոլոր գործարանատէրերը, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով կը վճարեն բանւորներին գործադուլի ժամանակ չաշխատած օրերի աշխատավարձը, զինւորական դրութեան մէջ յայտարարված նահանգների համար հրատարակված կանոնների 13-րդ յօդուածի հիման վրա պատասխանատուութեան կենթարկվեն, այսինքն կը բանտարկվեն 3 ամսով կամ կենթարկվեն մինչև 3000 րուբլի տուգանքի։ Սոյն պարտադիր կանոնը օրէնքի ոյժ է ստանում հրատարակման օրից։ 1906 թ. օգ. 15. Բագու»։

—

Ներքին գործերի մինիստրութեան այն սեկցիայում, ուր կենտրոնացած են զանազան տեղեկութիւններ և նիւթեր կուսակցութիւնների ու միութիւնների մասին, յիշված է, որ հոկտեմբերի 17-ի միութիւնը ունի 49 բաժանմունքներ, այնպէս որ հաղորդված լրագրական տեղեկութիւնները, թէ նա ունի 100 բաժանմունք, անհիմն են։ («Рѣчь»)։

—

«Око» Լրագիրը հաղորդում է, որ Օնիպկօյի գործի քննութիւնը դադրեցվում է հիմնաւոր մեղադրանքներ չը լինելու պատճառով։ Մտադիր են նրան աքսորել Սիբիրի նահանգներից մէկը։ Մօտ օրերս Օնիպկօյի ճակատագիրը կը վճռվի վերջնականապէս։

—

Մինիստրների խորհրդի նախագահը յանկութիւն է յայտնել, որ հրէական հարցը մանրազնին կերպով պարզվի և կարգաւորվի։ Այդ ցուցմունքը տրված է ընդհանուր գործերի դեպարտամենտին, որի մօտ գտնվում են հրէաների վերաբերեալ գործերը, և դեպարտամենտը ներկայումս սկսել է մշակել այդ հարցի մասին եղած բոլոր նիւթերը։ Ինչ ձև կը ստանայ այդ օրինագիծը, ինչպիսի արտօնութիւններ կը տրվեն նրա հիման վրա հրէաներին, դժուար է ասել առայժմ, բայց ենթադրում են, որ բնակութեան սահմանները կամ կը վերացվեն բոլորովին կամ թէ կընդարձակվեն։ Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ մինիստրների խորհուրդը, քննելով այդ հարցը, իրան անձեռնհաս գտաւ լուծելու այդ հարցը, մտադրութիւն կայ այդ խնդիրը լուծել օրէնսդրական կարգով, Պետական Դումային վերապահելով նրա մշակումը։ Կառավարչական շրջաններում, ինչպէս հաղորդում է «Новое Время» լրագիրը, այն կարծիքին են, որ, այսպէս թէ այնպէս, հարկաւոր է շուտով կանոնաւորել հրէական հարցը, հրէաներին դարձնելով իրաւահաւասար կայսրութեան միւս ազգաբնակութեան հետ միասին։ Բնակութեան սահմանների վերացումը համարվում է ցանկալի և կարևոր միջոց հրէաների մեծամասնութեան տնտեսական վիճակը բարձրացնելու համար։ Բնակութեան համար սահմանված տեղերում հրէայ կապիտալիստները, իրանց ձեռքը առնելով ամբողջ առևտուրը և արդիւնաբերութիւնը, ստրկացրել են աւելի աղքատ հրէաներին և նրանցից ստեղծել սոված պրօլետարիատ։ Վերջինս, անկարող լինելով ազատվել իր եղբայրների լծից և միևնոյն ժամանակ պաշտպանութիւն չը գտնելով ադմինիստրացիայի կողմից, ուրախութեամբ մտնում է յեղափոխական միջավայրը, ուր խոստանում են նրան լաւ ապագայ։ Այդպիսով, բնակավայրերի որոշումը մի տեսակ ծառայում է իբրև յեղափոխական պրօպագանդայի օջախ և յեղափոխականների բոյն։ Ծրագրի էական կէտերը հետևեալներն են՝—թոյլ տալ հրէաներին ամենուրեք ապրելու, առևտուր անելու, բարձրագոյն դպրոցներ մտնելու համար վերացնել տոկոսների յարաբերութիւնը և այլն։ Վերջին ժամանակներս հրէաների միջնորդութիւնը այդ հարցերի համար շատացել է, մինչդեռ Պետական Դումայի գումարումից առաջ և նրա ամբողջ նստաշրջանի ընթացքում սաստիկ պակասել էր։

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են. «Յունիս, յուլիս ամիսները բարեխառն ու անձրևային գնալով, այժմ մեզանում սկսել են չը տեսնված շոգեր լինել։ Մի կողմից շոգը, միւս կողմից քաղաքիս յատուկ անմաքրութիւնները օդը անտանելի են դարձնում»։

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են. «Կիրակի, օգ. 13-ին, մեզանում նշանակված էր Կարապետեան և Եղիսաբեթեան հայ երկսեռ ուսումնարանների հոգաբարձուների ընտրութիւնը։ սակայն ծխականների օրինաւոր թիւ չը հաւաքվելով ժողովը չը կայացաւ ու յետաձգվեց միւս կիրակի, ամսիս 20-ին։ Այս ընտրութիւնը մեր քաղաքի համար մեծ նշանա-

---

ները անհամար օրէնքների և սովորութիւնների շղթայով։

Ես դրան կը պատասխանեմ,—փշրեցէք շղթան, փշրեցէք, եթէ կամենում էք նոր և իսկական յեղափոխական հոսանք մտցնել հայի լճացած կեանքում։

Փշրեցէք, եթէ կամենում էք բարձրացնել հային և կրօնական համայնքի ամօթալի դրութիւնից վերածել ազգութեան պատուաւոր աստիճանին։

Փշրեցէք, եթէ թանգ են ձեզ համար հայութեան և ոչ-ուղղահաւատ լուսաւորչականների շահերը։

Փշրեցէք, եթէ չէք կամենում, որ օտարներն ասեն ձեզ համար, թէ հայը մի սրբութիւն ունի միայն—եկեղեցի. մի դիպչիր նրան, այնուհետև արա ինչ որ կամենում ես. բռնաբարիր և ազգութիւնը, և՛ լեզուն, և հոգին, և միտքը, և բնաւորութիւնը, և կնոջն ու աղջկան. մի դիպչիր եկեղեցուն, այնուհետև ազատ ես, թէկուզ մորթիր նրան ու քարուքանդ արա, ցրիւ տուր նրա ամբողջ հայրենիքը։

Չէ՞ որ այդպէս էլ վարվեցին մեզ հետ. մեզ վերադարձրին սխալմամբ գրաւված եկեղեցական կալուածները, բայց ցրիւ տուին ու հողի հետ հաւասարեցրին մեր հայրենիքը։

Չէ՞ որ թիւրքական Հայաստանում ոչնչացրին մեզ, կտրեցին մեր հոտը մեր բնիկ երկրի ու ժառանգութեան զանազան վայրերից, բայց թողին կանգուն եկեղեցիները...

Չը լինի մի օր, երբ թիւրքական և ռուսական հայաստաններից իսպառ կտրված լինի հայի ոտքը, երբ նա, երբայեցու նման ցրիւ ընկած լինի աշխարհիս հեռու ու մօտիկ անկիւնները, նոյն այդ եկեղեցու քարերը լեզու առնեն ու ասեն.—կործանված ազգ, դու արժանի էիր քո վիճակին. դու մեզ գիտէիր պաշտել, բայց չը գիտէիր պաշտել քեզ։

Ինձ քաջ յայտնի է,—անցեալի շղթան կուռ է և ամուր, ոյժը՝ տիտանեան, բռունցքն՝ երկաթի. բայց զինվեցէք և դուք ազգի ընդհանրութեան կռած ու կոփված կամքով, ու կը տեսնէք, որ այդ շղթան էլ, ոյժն էլ, բռունցքն էլ ոչնչացած կը թաւալվեն ձեր ոտների տակ։

Փշրեցէք ու ասացէք Էջմիածնի Կաթողիկոսին, որ մենք շնորհակալ ենք ձեր այն պարգևից, որով իրաւունք էք տալիս մեզ ծխական ընտրութիւնների միջոցով կենտրոնական ժողով գումարելու. ասացէք, որ և իրաւունքի, և՛ ընտրութիւնների աղբիւրն ու շնորհների բաշխողը մենք ենք, իբրև ժողովուրդ, ու առանց ձեր միջամտութեան էլ մեր զուտ աշխարհիկ համախմբումների—գիւղական և քաղաքային համայնքների—միջոցով կարող ենք կատարել աւելի լաւ ընտրութիւններ, կազմել պատգամաւորական աւելի օրինական ժողով, որ լիազօրութիւն ունենար Ռուսաստանի համայն հայութեան կողմից իր գործադիր մարմիններից մէկի միջոցով բանակցութեան մէջ մտնել ինչպէս ձեզ, այնպէս էլ կաթոլիկ կղերի և բողոքական ժողովրդապետների հետ վերջնականապէս մաքրելու անցեալի հաշիւները, որքան այդ հաշիւները վերաբերում են ազգային-ժողովրդական դպրոցին և ազգին գոյք ու ստացուածքներին։

Ասացէք նոյնպէս Էջմիածնի Կաթողիկոսին, որ մենք շնորհակալ ենք նաև ձեր միւս շնորհներից, ինչպէս շնորհակալ ենք ձեր բոլոր նախորդներից, սկսած Գրիգոր Պարթևից մինչև վերջին կաթողիկոսը, որոնք այնքան առատութեամբ մեզ վրա շնորհներ են թափել։ Ասացէք, որ մենք այժմ զզուած ու թաթախուն այդ շնորհներով՝ չը գիտենք ուր դնենք մեր ջախջախված գլուխը—հայրենի ամայացած լեռների վրա, Ասիայի խորքերում, Աֆրիկայի աւազուտներում թէ հեռու Ամերիկայի բաբելոն-քաղաքների փողոցային քարերին։

Ասացէք, որ մենք երկնքից մինչև գետին շնորհակալ ենք ձեր հազարամեայ խնամակալութիւնից և այնքան զգածված ենք շնորհակալութեամբ, որ աշխարհիս բոլոր գետերի ափերի վրա հայրենի տան աւերումը ողբալիս չենք դանդաղում անդադար «օրհնութեամբ» յիշել ձեր անունը։ Հերիք է. դուք վաստակեցիք դարաւոր աննինջ հոգսերից. հիմա թողէք, որ մենք լինենք մեր խնամակալը, գոնէ փորձենք, գուցէ մի օր հասնենք այն վաղուց անցած օրերին, երբ դուք գոյութիւն չունէիք աշխարհիս վրա, երբ հայը մարդ էր, ինչպէս վայել է լինել մարդուն, ազգ՝ հաւասար ուրիշ ազգերի, երբ մենք ունէինք ուրիշ սրբութիւններ, ուրիշ պաշտելիք...

Ասացէք ու յետ տուէք բոլոր շնորհները, և՛ տիրացուի, և՛ քահանայի, և՛ առաջնորդի և՛ Կաթողիկոսի, և կենտրոնական եկեղեցական ժողովի ընտրութեան իրաւունքի շնորհները. բոլորը, բոլորը, թէ նորն և թէ հինը... Երբ մենք կը դառնանք դէպի մեր դպրոցին ու գոյքերին, երբ մենք կը լինենք մեր խնամակալը, այնուհետև այդ շնորհները մեզ պէտք չեն. դրանք միայն աւելորդ բեռ են, եռանդի ու գործունէութեան աննպատակ վատնումն, զուր ժամավաճառութիւն։ Ո՞ր ազգը, իբրև ամբողջութիւն, խառնվում է քահանայի, եպիսկոպոսի, պատրիարքի կամ այլ բարձրաստիճան եկեղեցական պաշտօնեայի ընտրութեան կամ նշանակման մանր ու նեղ հաշիւների մէջ։ Գնացէք, տեսէք ձեր հաշիւները, ինչպէս կամենում էք և մեզ մի զբաղեցնէք այդ անթիւ անմիտ ու աննպատակ ընտրութիւններով։

Անցեալում մենք շատ զբաղվեցինք դրանցով, շատ կեանք մաշեցինք, շատ եռանդ վատնեցինք և բացի վնասից ոչ մի շահ չը ստացանք։ Մենք համոզվեցինք, որ ընտրված քահանան էլ վատ է ու տգէտ, ինչպէս և չընտրվածը, ընտրված եպիսկոպոսն էլ անարժան է ու կաշառակեր, ինչպէս և չընտրվածը, ընտրված Կաթողիկոսն էլ անփառ է, արծաթասէր և թշնամի ազգային-ժողովրդական շահերի, ինչպէս և չընտրվածը, իսկ փայլուն բացառութիւնները հազուագիւտ, խիստ հազուագիւտ։ Հալածված, տանջված, ատանդական՝ այս վերջիններն իրանց ամբողջ կեանքում լաց են եղել ձեր ձեռքում և անիծել այն ճակատագրական սխալը, որ գործել են պատանեկութեան կամ կանուխ երիտասարդութեան օրերում մեր հարազատ գրկից ընկնելով կղերականի տարտարոսը։ Օ՜, մենք այդ լաւ գիտենք, մենք էլ հազարամեայ փորձ ունենք. եկեղեցական պաշտօնեաների ընտրութեան կարթով մեզ չէք բռնի այսուհետև ու չէք կապի ծխի, եկեղեցու, քահանայի ու եպիսկոպոսի հետ։ Թող դրանցով զբաղվեն նրանք, որոնք առանձին յանկութիւն ու ժամանակ ունեն, բայց մի ամբողջ ազգութիւն չէ կարող ժամավաճառ լինել դրանցով։ Նա հրաժարվում է այդ «շնորհներից»։

Չեմ կասկածում, որ երբ կարդացվեն այս տողերը՝ կը գտնվեն բերաններ, որոնք, փրփրած խեղդող զայրոյթից, կը գոռան ու կաղաղակեն հին երգը.—«հայոց եկեղեցին ժողովրդական է, հայոց եկեղեցին նման է օտար եկեղեցիներին, հայոց եկեղեցին այս է, այն է. և վերջապէս կարելի՞ է հրաժարվել ընտրողական իրաւունքից. դա անմտութիւն է»։

Ախ չը գիտեմ ո՞րն է անմտութիւն. թողնել յուղարկաւորութեան ու թաղման սիրահարներին միայն խմբվելու մահամերձ հիւանդի շուրջը, թէ՞ քարոզել ամենքին, որ թողնեն բանն ու գործ և վազեն գերեզմանատուն։

Խոստովանեցէք, որ քրիստոնէական եկեղեցին այն ձևով, ինչ ձևով գոյութիւն ունի այժմ ոչ միայն մեր, այլ և ուրիշ, շատ աւելի քաղաքակիրթ ազգերի մէջ, վաղուց արդէն մի հոգեվարք մարմին է, որից ամենքն էլ աշխատում են օր առաջ խոյս տալ ու ազատվել։ Այդ եկեղեցին իր 19 դարվայ գոյութեան ընթացքում ոչ միայն չը տուեց ազգերին խոստացված հաւասարութիւնն, եղբայրութիւնն ու երջանկութիւնը, այլ և ողողեց աշխարհը արեան հեղեղներով... Քրիստոսի, այդ անզուգական հանճարի երկնային վեհ վարդապետութիւնը այնպէս էլ մնաց երկնքից կախված ու չընկաւ ոչ ոքի բերանը։ Նա ինքը՝ վարդապետը՝ մի անուղղայ օպտիմիստ, մի չքնաղ երազատես, մի վառ ու բորբոք սիրահար մարդկային ամբողջ ցեղի ու նրա երջանկութեան, անշուշտ մեղաւոր չէր։ Երիտասարդ, մաքուր իդէալիստ՝ նա չէր ճանաչում մարդկային կարծր գլուխը և դաժան սիրտը. նա երևակայել անգամ չէր կարող, որ մի այնպիսի հրաշագեղ վարդապետութիւն, որպիսին ինքն էր քարոզում, և որի դիւթական երազների մէջ անցկացրեց իր ամբողջ կեանքը, մի օր, սոսկալի յեղաշրջում կրելով, մարդկութեան դահիճների ձեռքում կարող է դառնալ չարութեան, ոխի, նախանձի, արեան ու սպանութեան գործիք—մի ահռելի արգելք մարդկային երջանկութեան դէմ։ Սակայն այդ ողբալի վախճանն ունեցան Քրիստոսի հրաշագեղ գաղափարները և կունենայ ամէն մի վեհ գաղափար, որի իրագործման ճանապարհը սխալ է գծագրված։ Այդ մենք տեսնում ենք այժմ ամէն մի քայլափոխում։ Բովից արդեօք մի հատ թաւ հայ եկեղեցին ու միայնակ անաղարտ պահեց իր պատիւն ու արժանիքը—չեմ կարծում։ Համաձայն եմ միայն այն բանին, որ նա դարձաւ... ժողովրդական. այո, ժողովրդական, որովհետև շատ ծծեց հայ ժողովրդի արիւնը, ծծեց անյագաբար, ծծեց դարերով, մինչև որ բոլորովին ուժասպառ ու արնաքամ արաւ նրան։ Եւ խեղճ զոհը, հայ ժողովուրդը, միշտ խաբվեց այն կղերական շնորհներով, որոնք ժամանակ առ ժամանակ ձգվում էին նրա առաջ, իբրև ողորմութիւն, ու չը հասկացաւ, որ դրանք, լոկ մի-մի որոգայթ, լոկ մի-մի ամուր պարան են հայ ժողովրդին եկեղեցու ու նրա շահերի հետ պինդ կապել—կաշկանդելու համար։

Բաւական է. մենք շատ խաբվեցինք. յետ տուէք այդ բոլոր շնորհները և որոնեցէք ուրիշ տեղ, եթէ կարօտ էք շնորհների։ Իսկ եթէ ինձ մնար՝ ես կասէի. Թող կենդանի լինի անվերջ դարեր հայ ժողովուրդը. նա ինքն է և շնորհը և շնորհողը։ Հասել է ժամը, երբ նա կոնդակ արձակէ յանուն լուսաւորչական կաթողիկոսի և ասէ. «Մենք, ողորմութեամբն Աստուծոյ, ազգ հայոց և ժողովուրդ, իրաւունք ենք շնորհում քեզ Էջմիածնի կաթողիկոսիդ՝ հանգիստ ու անխռով թագաւորելու քո վանքիդ ու եկեղեցիներիդ մէջ և ըստ քո կամաց կառավարելու հոգևորականներիդ։ Դրա համար թոշակ ենք կապում քեզ և քո հոգևորականներիդ մեր ճակատի արդար քրտինք—վաստակից, որպէսզի աղօթես այն հայերի համար, որոնք կարօտ են դեռ աղօթքի, իսկ դրանից դուրս ոչ մի խօսք և ոչ մի գործ. այս է մեր կամքը»։

Ա. Մխիթարեան

կութին ունեցող հարցերից մէկն է. այդ հոգաբարձութիւնից է կախված գլխաւորապէս մեր ուսումնարանների բարելաւման և 1000-ի չափ մանուկների կրթական գործը. ուստի պէտք է ձգտել, որ ընտրվեն արժանաւորները, իսկ արժանաւորները կընտրվեն միայն այն ժամանակ, երբ ժողովուրդը ամեն մի խոչընդոտ յաղթելով՝ կարողանայ մասնակցել ընտրութիւններին ազատ կամքով, ոչ ոքից երկիւղ ու կախումն չունենայ ու համարձակ, ինքնակամ ընտրութիւն անէ։ Ուստի հրաւիրում ենք մեր բոլոր ժողովրցեան, որ այս ընտրութեանն անպատճառ մասնակցէ, չը թողնէ ասպարէզը թոյֆոյական շահագրգիռ մարդկանց։ Ճանաչեցէք ձեր իրաւունքը, ձեր օգուտը, այլապէս դուք կը զղջաք»...

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թէհրան, 5 օգոստոսի

Պարսից կառավարութիւնը իր երկրի ու ժողովրդի բարօրութիւնը ու առաջադիմութիւնը ամեն բանից վեր համարելով՝ մի շարք խելացի կարգադրութիւններով ժողովրդի յուզված մտքերը հանգստացրեց։ Ներկայ նորընտիր Սադրազամը, որի բարեմասնութիւններն և վարչական շինարար յատկութիւններն ամենքին յայտնի են, ժողովրդի արդար պահանջներին գոհացում տալու, խռովութիւնների առաջն առնելու անյապաղ շտապեց Վեհափառ Շահից ստանալու ժողովրդի պահանջած իրաւունքները։ Վ. Շահի ժողովրդին շնորհած վերջին ֆիրմանը այսպէս է ուղղված սադրազամին. «Նորին վսեմութեան Սադրազամին։ Քանի որ Ամենակարողն Աստուծոյ անսահման ողորմութեամբն Իրանի առաջադիմութեան, բարօրութեան ու բարգաւաճման ղեկը մեր կարող ձեռքն է յանձնված և մեր Վեհափառ անձնաւորութիւնը ընդհանուր Պարսկաստանի ժողովրդի և մեր հաւատարիմ հպատակների իրաւունքների պաշտպան է կարգել, ուստի այժմ մեր արքայական կամքը բարձրագոյն հաճեց որոշում կայացնելու, մեր երկրի ընդհանուր ազգաբնակութեան անդորրութեան, խաղաղութեան և պետութեան հիմունքների հաստատութեան համար հարկ եղած վերանորոգումները հետզհետէ իրագործվեն։ Բարձրագոյն կարգադրում ենք, որ իշխանազուններից, հոգևորականներից, ղաջարներից, աւագանիներից, կալուածատէրերից վաճառականներից և արհեստաւորներից ազգային խորհրդարանի համար Թէհրանում ընդհանուր ընտրութիւն կատարվի և յիշեալ խորհրդարանը կազմվի և հաստատվի, որպէս զի պետութեան և երկրի ընդհանուր գործերում խորհրդածէ, հոգայ և Իրանի առաջադիմութեան, բարգաւաճման և բարօրութեան համար պէտք եղած աջակցութիւնն և օգնութիւնը ցոյց տայ մեր հաւատարիմ մինիստրների կազմին։

Ազգային խորհրդարանը կատարեալ հաւատքով և վստահութիւնով պետութեան և ազգաբնակութեան բարիքի, ընդհանրութեան օգտի, երկրի բովանդակ ժողովրդի պիտոյքների վերաբերմամբ իր կայացրած վճիռներն ու կարծիքը մեր պետական առաջին պաշտոնեայի միջոցով մեզ ներկայացնէ, որպէս զի արքայական ստորագրութեամբ վաւերացվի։ Մեր տուած սոյն ֆիրմանի ընդհանուր ոգու միտքն է, որ յիշեալ ազգային խորհրդարանի կանոնադրութիւնը, նրա գոյութեան համար պէտք եղած պիտոյքներն ու միջոցները ընտրեալ անդամների բարեհայեցողութեամբ պիտի մշակվեն, կազմվեն, որոշվեն, ստորագրվեն ու արքայական վաւերացման տրվեն։ Աստուածային օգնութեամբ յիշեալ ազգային խորհրդարանը, որը մեր արքայական արդարադատութեան պաշտպան և զօրավիգն է լինելու, բացվի, և երկրի հարկաւոր վերանորոգութիւններն ու սրբազան կրօնի օրէնքների գործածութիւնը ձեռնարկէ։

Նոյնպէս բարձրագոյն հրամանագրում ենք, որ արքայական ֆիրմանի օրինակը յայտարարէք ու տարածել տաք, որպէս զի մեր երկրի ընդհանուր ազգաբնակութիւնը մեր արքայական բարի ցանկութիւններից, որոնք Իրանի թագաւորութեան և ազգաբնակութեան բարօրութեան համար են, ամենքը տեղեկանան և կատարեալ միջամտութեամբ և հանգիստ սրտով աղօթարարութեամբ զբաղվեն։ Տրված է Սահաբ-ղրանիյէ ամառային պալատում, ջէմադիէլ-սանիէ, 14-ին» Հէջրէթի 1324 թ. մեր թագաւորութեան 11 տարին։

Արքայական սոյն ֆիրմանի շնորհման առիթով, որը մի մեծ քայլ է դէպի ազատագրութեան և սահմանադրութեան ցանկալի աշխարհը, պարսիկ ժողովուրդը հրճված իր վեհապետի ժողովրդասիրական ձգտումների ու շնորհների առիթով, մեծ ուրախութեամբ դուրս եկաւ անգլիական դեսպանատնից ու գոհ սրտով սկսեց իր վաղուց ընդհատված զբաղմունքներով պարապել և երեք գիշեր շարունակ լուսավառութիւն արեց ամբողջ քաղաքում։ Սակայն ժողովուրդը իր միամտութեան և ապահովութեան համար իւրաքանչիւր վրանում տասը-տասը հոգի մարդ թողեց, մինչև որ արքայական ֆիրմանը ամբողջապէս իրագործվի։ Վեհափառ Շահի իր սիրելի ժողովրդին արած անսահման շնորհի մասին Պարսկաստանի բոլոր կենտրոններում հեռագրվեց, որոնք նոյնպէս ընդհանուր ուրախութեան մասնակցեցին։

Ժողովրդի ու կառավարութեան խնդրանքով Ղում գնացած հոգևորականները դէպի Թէհրան ճանապարհվեցին երեքշաբթի, օգոստոսի 1-ին, և Աղա Շէյխ-Ֆազլուլա մեծ մուշտայիդները իրանց բազմաթիւ հետևորդներով Շահ-Աբդուլ-Ազիմ ժամանեցին, ուր և գիշերեցին։ Նոյն օրը մեծ մուշտայիդներին ընդառաջ էին գնացել բազմաթիւ հոգևորականներ և յայտնի վաճառականներ։ Թէհրանի հայ հասարակութիւնը երկու օրից ի վեր մեծ պատրաստութեամբ ընդ առաջ էր գնացել մինչև Դէխէյր Շահ Աբդուլ-Ազիմից մէկ փարսախ հեռաւորութեան վրա. շքեղ վրանների տակ փառաւոր ու չը տեսնված հիւրասիրութիւն կատարվեց բոլոր անցուդարձ անող հոգևորականներից ու պարսիկ յայտնի վաճառականներից։ Մուշտայիդները ժամը երեքին հայկական վրանը ժամանեցին. վրանի մուտքի առաջ նրանց լուսանկարը հանվեց խառն հայերի հետ։ Մի քառորդ ժամից աւելի հանգստացան հայերի վրանում ուր օշարակով, քաղցրեղէնով և պտղով հիւրասիրեցին նրանց։ Արժանապատիւ հիւրերը հայերի քաղաքավարութիւնից ու հիւրասիրութիւնից զգացված անչափ գոհ մնացին։ Ի միջի այլոց նրանցից մէկը հետևեալ բովանդակութեամբ խօսեց հայերին. «Դուք, հայերդ, մեզ պարսիկներիս հետ մի երկրում էք ապրում և մեր երկրի ընդհանուր գործերում նոյն իրաւունքներն ու շահերն ունէք. ուստի պէտք է ամեն գործերում մեզ հետ համախորհուրդ ու կից լինէք, և միմեանց օգնութեամբ երկրի բարօրութեան համար աշխատենք և, յոյս ունենք, որ այսօրվայ ձեր ցոյց տուած ի սրտէ բղխած անկեղծ արտայայտութիւնները ապագայ համերաշխութեան գրաւական լինեն Պարսկաստանի երկու եղբայր ժողովրդի մէջ»։

Հիւրասիրութիւնից յետոյ պատուարժան հոգևորականները դէպի Շահ-Աբդուլ-Ազիմ ուղևորվեցին, ուր անհամբեր նրանց սպասում էր Թէհրանից և շրջակայ գիւղերից եկած մեծ բազմութիւն։

Չորեքշաբթի, ամսի 3-ին կառավարութեան կողմից երկու էսկադրօն ուղարկվեց մուշտայիդներին դիմաւորելու։ Սադրազամը, Սպարապետը և բարձրաստիճան մինիստրներն, իշխաններն ու վաճառականները դիմաւորեցին հոգևորականներին, որոնք խումբ ամբոխով շրջապատված, «սալաւաթի» հնչիւնի տակ, քաղաք ժամանեցին։ Երեք գիշեր շարունակ լուսավառութիւն է կատարվում ի պատիւ վերադարձած հոգևորականների։

Պարսիկ ժողովուրդը Վեհափառ Շահի ֆիրմանի համաձայն առայժմ ապագայում կազմվելիք ազգային խորհրդարանի կանոնադրութեան մշակելով է զբաղված։ Մեզ ծանօթ շրջաններում շատ է խօսվում հայ ազգի պրինց Միրզա Մելքոմ-խան Նազէմ-էլ Դովլէյի, Հռոմի արդի դեսպանի մասին, որին իբր թէ ժողովուրդը ցանկանում է Թէհրան հրաւիրել ապագայ ազգային խորհրդարանին գլուխ ունենալու համար։ Պարսկաստանի պետական այդ մեծ մարդի մասին պարսիկ թերթերը, մանաւանդ «Հաբլ-ուլ Մաթինը» միշտ գովասանքով է խօսել և քանիցս կառավարութեան խորհուրդ տուել, որ վերջինս օգտվի Նազէմ-էլ Դովլէի վարչական ընդունակութիւնից։ Պրինց Մելքոմ-խանը պարսիկ կառավարութեան անձնուէր և հին ծառաներից է և միևնոյն ժամանակ անչափ յարգված իմաստալից ու հասկացող դասից։ Նա վաղուց կազմած և մշակած ունի Պարսկաստանի սահմանադրութեան և ռեֆորմների համար առանձին մի ծրագիր «Ղանուն» անունով, որը նոյնպէս լաւ ընդունելութիւն է գտել ժողովրդի կողմից։

Մինիստրական կազմի մէջ ոչ մի նոր փոփոխութիւն տեղի չէ ունեցել։ Արտաքին գործերի մինիստրութեան պաշտօնը դեռևս վարում է ինքը սադրազամը. լուրերին և հաւանականութեանը նայելով՝ հեռու չէ, որ յիշեալ մինիստրութեան պորտֆէյլը մօտ ժամանակում յանձնվի Լոնդօնի դեսպան Ալաէս Սալթանէին կամ Պետերբուրգի դեսպան Մուշիր-էլ Մօլքին, որոնք Թէհրան են գտնվում այժմ։

Մ. Խ. Մելիքեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

17 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 օգոստոսի։ Մինիստրների խորհրդի երէկվայ նիստում քննվեց Կովկասի Փոխարքայի միջնորդութիւնը՝ գիւղացիների պարտադիր և կախում ունեցող յարաբերութիւնները դէպի կալուածատէրերը և հողատէրերը Անդրկովկասում դադարեցնելու համար։ Որովհետև այդ բանը անիրագործելի է առանց պետական ընդհանուր միջոցների հաշուին մինչև 20 միլիոնի չափ մի խոշոր գումար ծախսելու, որպէս զի բաւարարութիւն տրվի շահագրգռված հողատէրերին, մինիստրների խորհուրդը հնարաւոր չը համարեց այդ հարցի անմիջական լուծումը, գտնելով որ դա վերաբերում է Պետական Դումային և Պետական Խորհրդին։ Իսկ ինչ վերաբերում է, վերջապէս, Փոխարքայի Բագւում առանձին քաղաքապետութիւն հաստատելու առիթով յարուցած հարցին,—առանձին շահագրգռված վարչութիւնների մէջ այս հարցի նկատմամբ թերևս ծագող նկատողութիւնների և ենթադրութիւնների մանրամասն և նախապատրաստական կերպով պարզելու համար,—մինիստրների խորհուրդը օգտակար համարեց կազմել մի առանձին մասնաժողով ներքին գործերի մինիստրի օգնական, իսկ. պետ. խորհ. Մակարովի նախագահութեամբ և ներքին գործերի մինիստրի, ֆինանսների, առևտրական և արդիւնաբերական, ծովային և պետական վերահսկիչի և նոյնպէս Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայի դիւանական տեսչի մասնակցութեամբ։

Ուշ գիշերին վերջացաւ համալսարանների ռէկտորների և բարձր կրթական հիմնարկութիւնների տեսուչների ժողովը։ Որոշված է բանալ բոլոր բարձր կրթական հիմնարկութիւնները։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 օգոստոսի։ «Ֆրանկֆուրտ Ցէյտունգը» հաղորդում է Թեանցինից օգոստոսի 16-ից ռուսական հիւպատոսի կեանքի դէմ կատարված մահափորձի մասին։ Հիւպատոսը ծանր վիրաւորված է։ Չարագործը անուանել է իրան Լեւինսկի։

ԿԻԵՒ, 17 օգոստոսի։ Դատարանային առանձին կարևոր գործերի քննիչ Մինենկօի բնակարանում, խուզարկութեան ժամանակ գտնված է՝ Ուկրաինայի յեղափոխականների կուսակցութեան ծրագիրը, դատարանային քննիչների միութեան կանոնադրութիւնը, և մի գրութիւն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մաքսային տուրքերի դեպարտամենտի տեղեկութիւնների համաձայն 1906 թ. փետրվարի 1-ից մինչև յուլիսի 30-ը Ռուսաստանից արտահանված է 557 միլիոն րուբլու ապրանք, մուծված է 324 միլիոն գումարի։

ՊՈԼՏԱՎԱ, 17 օգոստոսի։ Վրա գիւղում մի գիւղացու տունը խուզարկելու ժամանակ ընդհարում տեղի ունեցաւ գիւղացիների և ոստիկանութեան միջև։ Ծեծված է պրիստաւը, ծանր վիրաւորված են ուրեադնիկը և պահակը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 օգոստոսի։ Ստաւրօպօլ քաղաքը, Ստաւրօպօլի, Պլակոտարինսկի և Մեդվէժենսկի գաւառները յայտարարված են մէկ տարի ժամանակամիջոցով ուժեղացրած պահպանութեան դրութեան մէջ, տալով քաղաքապետութեան իրաւունք Ստաւրօպօլի և և յիշեալ գաւառների վերաբերմամբ առայժմ Ստաւրօպօլ ուղարկված գեներալ-մայոր Լիտվինովին։

Ֆինանսների մինիստրը օգոստոսի 17-ին յայտնել է սենատին, որ ինքը հրամայել է բայց թողնել պետական 4% ռէնտայի 5 նոր սերիաներ։

18 օգոստոսի

ԲԻԼԲԱՕ, 17 օգոստոսի։ Գործադուլը շարունակվում է։ Սանտանդէրայի մօտ արիւնահեղ ընդհարում տեղի ունեցաւ գործադուլների և ժանդարմների միջև. կան շատ վիրաւորվածներ։

ԼՈՆԴՈՆ, 17 օգոստոսի։ «Դէյլի Մէյլ»-ը հաղորդում է Թէհրանից, որ. ի նկատի ունենալով Պարսկաստանում շարունակվող յուզմունքները, թերևս Թէհրանից կը սկսեն փախչել։ Պարսից ծոցում շրջում են անգլիական երկու զինուորական նաւեր։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 17 օգոստոսի։ Կուբայի ապստամբութիւնը լուրջ չափեր է ընդունում և օր-աւուր տարածվում է շրջակայքը, նոյնիսկ հասնելով Սանտ-Եագօ։ Կառավարութիւնը ծառայութեան է կոչում նոր զօրքեր և Միացեալ-Նահանգներում շատ հրացաններ է պատուիրել։

ԽԱՐԿՕՎ, 17 օգոստոսի։ Ոստիկանապետի վարչութեան կից գտնվող «Նադեժդա» ընկերութեան գրասենեակը մտան 4 զինված անձինք և խլելով գանձապահից 3000 րուբլի անյայտացան։ Չարագործներից մէկը դիմափոխված էր, իսկ միւսը ձեռքին ռումբ ունէր։

ԼՈՒԿԱ (Իտալիա)։ Այրվում են Պօրցուամա համայնքի անտառները. կրակը բռնել է 20 քառ. կիլոմետր տարածութիւն։ Հրդեհի տեղն են գնացել իշխանութիւնները։

ԲԵԼԳՐԱԴ, 17 օգոստ.։ 81 տարեկան հասակում վախճանվեց Ալէքսանդր Թագաւորի պատանեկութեան ժամանակ Սերբիայի երեք խնամակալներից մէկը՝ Բելիմարկովիչը։ Հանգուցեալը յայտնի է սերբ-թիւրքական կռւում Նիշի և Բրաննի վերցնելով։ Նա Օբրենովիչների անկեղծ համախոհներից մէկն էր։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 օգոս.։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կից կազմված առանձին մասնաժողովի՝ բարձր կրթական հաստատութիւնները բանալու առիթով արած որոշումները յայտնվելու են մինիստրների խորհրդին ի թոյլտուութիւն։ Խորհրդակցութիւնը անհրաժեշտ գտաւ բարձր կրթական հաստատութիւնների խորհուրդներին գործողութեան լիակատար ազատութիւն տալ, ոստիկանական միջոցներ ձեռք են առնվելու միմիայն խորհրդի թոյլտուութեամբ։ Վերջին ժամանակներս ուսանողների և մանկավարժական խորհուրդների վերաբերմամբ ձեռք առնված բոլոր բացառիկ միջոցները անյապաղ պիտի վերացվեն։

Վիբօրգի կոչը ստորագրող Պետական Դումայի նախկին անդամների գործը նախնական քննութեան առաջին հերթումն է։ Ի նկատի ունենալով կառավարական և հասարակական հաստատութիւնների վրա կատարված զինված յարձակման յաճախակի դէպքերը, պօստ-հեռագրական գլխաւոր վարչութիւնը անհրաժեշտ գտաւ Պետերբուրգի գլխաւոր պօստատան մէջ զինեալ պահնորդութիւն մտցնել, որը զինված է լինելու սուինաւոր վինտովկաներով։

Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը այսօր մեկնում է՝ Սիբիրի երկաթուղին հետազօտելու և նոր կառուցվելիք երկրորդ գիծը քննելու համար։

ԼՈՆԴՈՆ, 18 օգոստոսի։ Սօցիալ-դեմոկրատական ֆեդերացիայի խորհուրդը մի մանիֆեստ է հրատարակել, որով կոչ է կարդում անգլիական ազգաբնակութեան՝ օգնել ռուս յեղափոխականներին։ Բրիւսէլում բացված է օժանդակիչ ֆօնդ պառլամենտի անդամների համար։ «Դէյլի Մէյլը» մատնանշում է, որ յեղափոխականների գործադրած բրաունինգները ներմուծվում են Բելգիայից։ Բրիւսէլում մեծ քանակութեամբ տարածված են այնպիսի բրօշիւրներ, որոնք ցոյց են տալիս, թէ ինչպէս կարելի է պատրաստել ռումբեր և դժոխային մեքենաներ։

ԴՈՒԲՐՈՎԿԱ, 17 օգոստոսի։ Անկարգութիւններին մասնակցողների ձերբակալութիւնները շարունակվում են։ Ձերբակալվածներն ուղարկվում են Ցարիցին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 օգոստոսի։ Լեհաստանի թագաւորութեան մէջ զինուորական դրութեան փոխարէն պաշարողական դրութիւն մտցնելու մասին տարածված լուրերը հիմքից զուրկ են։ Վարշավայի գեներալ-նահանգապետը այդ մասին ոչ մի միջնորդութիւն չէ յարուցել։

Պեկինի դեսպանը հաղորդում է, որ Տիանցզինի ռուսաց դեսպան Լաւդէվը վիրաւորված է ատճանակով։ Մահափորձող ռուսահպատակ Լէվինսկին ձերբակալված է։

Օգոստոսի 23-ին նշանակված է համաշխարհային կազմակերպութեան համագումարը, որին մասնակցելու են զէմստվային վարչութիւնների ներկայացուցիչները։

Ս. Սինօդի օբեր-պրօկուրօրի օգն. Ռոստրօմովին հրամայված է ներկայ լինել սենատի նիստերին։

Ոստիկանութեան վարչութիւնը մի առանձին մինիստրութիւն վերակազմելու մասին լրագիրների տարածած լուրերը սխալ են։

ՄԱՑՑՈՒԼԱԻ, 17 օգոստոսի։ Կատին գիւղի բնակիչները աշխատեցին ջարդուփշուր անել Գոլիինսկու կալուածքը։ Սպանված են երկու պահակ, ծեծված են պրիստաւը և պահակների առաջնորդը։ Ուղարկված են զօրքեր։

ՕԴԵՍԱ, 17 օգոստոսի։ Ժամանակաւոր գեներալ-նահանգապետ հիւանդացած Կարագօզովի տեղ՝ նշանակված է սապիօրների բրիգադի հրամանատար գեներալ Գիլգօլը։

Յաջողվեց ձերբակալել երկու անարխիստների։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 օգոստոսի։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը թոյլ է տուել կազմակերպելու քաղաքային ուսումնարանների կից հոգաբարձական ժողովներ։

Դատաստանային պալատը դասակարգային ներկայացուցիչների մասնակցութեամբ «Наша Жизнь» և «Народное Хозяйст.» լրագիրների խմբագիր Վօդովօզովին դատապարտեց մի տարի բանտարկութեան, արգելով պարապել 5 տարվայ ընթացքում խմբագրութեամբ և վերոյիշեալ լրագիրները ընդմիշտ դադարեցնելով։

Առանձին յանձնաժողովի որոշմամբ բարձր կրթական հաստատութիւնների բազմաթիւ ուսանողներին թոյլ է տրվում անպայման ազատութիւն հաւաքոյթների, կրթական հաստատութիւնների մէջ, բայց միտինգները կողմնակի անձանց մասնակցութեամբ միանգամայն դատապարտելի են։

ՄՕՍԿՎԱ, 17 օգոստոսի։ Մօսկվայի համալսարանի խորհուրդը վերջնականապէս նշանակեց քննութիւնների ժամանակը և գործնական քննութիւններ 5-րդ կուրսի մեդիկների բժշկի կոչման համար։ Քննութիւնները կը տեւեն հոկտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 15-ը։ Արբաթում խուզարկութիւնից յետոյ փակված է Բուտիրովի գրավաճառանոցը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 օգոստոսի։ Աչքի առաջ ունենալով պետական միջնակարգ ուսումնարանների քչութիւնը և պակասութիւնը, ժողովրդական լուսաւորութեան մինիստրը ազատ թոյլատրում է բանալու մասնաւոր միջնակարգ կրթական հիմարկութիւններ և ուսումնարաններ իրաւունքներով հանդերձ աշակերտներին։

Յունվարից բացված է կանանց 47 գիմնազիա, տղամարդկանց՝ 8, պրօգիմնազիա՝ 9, ռէալական ուսումնարաններ՝ 6։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Գոլովինի, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերքաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզաուղ. հ.
Կ. Մ. ՋԻՒՇԱՆԵԱՆ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մաշկի, վեներական և վերքաբուժութեան։
Զ. Ի. ԲԱՐԱՆՈՎԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Ի. Կ. ԳԷՆԻԵՒ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Զ. Գ. ՉԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇԷՐԲԻՆԻՆԱ—1½—3 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց հ.
Ի. Գ. ԱՐԵՆՑ—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.
Վճարը 50 կ. Չքաւորները ձրի։ [illegible]
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺԻՇԿ
Գ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ, մասնաւորապէս կրծքի։
Քննութիւն և բուժումն X ճառագայթներով առաւօտեան ժամը 10—11 և երեկոյեան 5—7։
Քօչէնէվսկայա փող. տ. № 7 (Վէլցելի հիւրանոցի մօտ)։ 8—30

ԲԺԻՇԿ
Լեւոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների։ Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.։ Կանանց և երեխաների համար 11—12 ժ.։ Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կոցէբուսկայա փողոցի, տուն Թամամշեանի։ Մուտքը Կոցեբուսկի փողոցից № 2.
(ա. օ.) 214—300

ՀՐԱՒԷՐ
ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՆԱԽԿԻՆ ՓՈԽԱՆՈՐԴ Թոմա վարդապետը զանազան պարոններից և հիմնարկութիւններից ստացել է մեծ քանակութեամբ փողեր, վագոններով ալիւր, շաքար, տան և հագնելու իրեղէններ, հողագործութեան և արհեստաւորների համար գործիքներ, վառելափայտեր և այլն հայ թալանվածներին և չքաւորներին բաժանելու. և քանիցս անգամ դիմումներ եղան պարբերական լրագիրների միջոցով, բայց Թոմա վարդապետը իր ստացած փողերի և իրեղէնների որքանութեան և նրանց գործադրութեան հաշիւ յամառ կերպով մինչև հիմա չէ ներկայացրել։ Ուստի արդարութիւնը երևան հանելու և Թոմա վարդապետի գործունէութիւն ստուգելու և քննելու համար մի խումբ հայեր խոնարհաբար խնդրում են այն պարոններին և հիմնարկութիւններին, որոնք ուղարկել են Թոմա վարդապետին, ուրիշ մարդերին և հիմնարկութիւններին փողեր և իրեղէններ Նախիջևանի և նրա հայ գիւղերի 1905 թ. թալանվածներին և չքաւորներին բաժանելու, թող նեղութիւն կրեն շուտով ուղարկել մանրամասն տեղեկութիւն Հին-Նախիջևան պ. Միքայէլ Մէլիքեանցին։ 2—2

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
և վաճառվում է
ԱՐԵԱՆ ՁԱՅՆԵՐ
Երգարան գիրքը։
Ճանապարհածախսով գինը 75 կոպ.
Փառակազմը՝ գինը 1 ր. 10 կոպ.։
Նոյնպէս հայերէն զանազան գրքեր ցանկացողները դիմեն՝ Баку, О. Газанчяну, Бюро газетъ, противъ гост. «Кавказъ».
(շար. 1 ան.) 2—3

ԳԵՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ
Լիակատար դասընթացն աւարտած
ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ,
որ վարել է ուսուցչի պաշտօն հայոց դպրոցներում, ցանկանում է նոյն պաշտօնով տեղափոխվել ուրիշ տեղ։ Գերադասում է Կովկասից դուրս պաշտօնավարել։
Դիմել «Մշակի» խմբագրութեան 3—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
(Ամառային շինութիւն)
Շաբաթ, օգոստոսի 19-ին
Դերասանների մի խումբ
Յ. Ս. Սօկոլեվսկու ղեկավարութեամբ
կը ներկայացնէ հայերէն լեզուով
ԿՈՂՈՊՏՎԱԾ ՓԱԿԱՆԱԳՈՐԾ
Կոմ. վոդ. 2 գործ. հեղ. Շահազիզեանի
Մասնակցութեամբ՝ տ. Նոնիկեանի, պ.պ. Տէր-Դաւթեանի, Օհանեանի, Ուշտունու և ուրիշների։
Ռէժիսսոր՝ Ե. Զ. Տէր-Դաւթեան
Սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին
(շ.) 1—1

ՆԿԱՐԻՉ Ա. ՖԷԹՎԱՃԵԱՆԻ
ակվարելներից ֆաքսիմիլէ պատրաստված
ԱՆԻԻ ՏԵՍԱՐԱՆՆԵՐԻՑ
Գունաւոր ալբոմներ
ստացվել են արտասահմանից և ծախվում են Թիֆլիսում՝ Գուտտենբերգի գրավաճառանոցում, Գնունու և Մարիմի վիմագրական արհեստանոցում, Բաթումում՝ Արմենակ Ֆեթվաճեանի մօտ, Օդեսսայում՝ Զարեհ Սարգսեանի մօտ Ալէքսանդրօպօլում՝ Նիկոլայ Տիգրանեանի մօտ
Ալբոմի հատը 1 ռուբ. 20 կոպ.։
Անիի պատկերները ծախվում են և իբրև պօստ-կարտեր, բաց նամակներ, զոյգը 15 կոպ., ժանրային պատկերներ՝ հատը 10 կ., հազարով գնողները կը ստանան 20% զեղչ։ Պօստի, ծրարման և փոխադրութեան հարկաւորված ծախսերը գնողների հաշւով են։
Արտասահմանում պատուերներին ձեռնտու է դիմել Վիեննա՝ Vienne, Boghos Kürkdjian-ին։ 1—3

Գանձակում տեղի ունեցած ընդհարումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրոնական ՀԻՒՐԱՆՈՑԸ շքեղ կահկարասիներով Թիֆլիս, Պուշկինսկի փողոցի վրա № 23, պրավօսլաւնի հոգևոր սեմինարիայի դիմաց
„ՆՈՄԵՐԱ ՑԵՆՏՐԱԼ"
մականունով։ Գները 70 կոպէկից մինչև 2 րուբլի։ Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով։
Ալէքսանդր Ցարուբինով
(հ. կ. ե.) 48—100

Մի հայուհի, որը աւարտել է գիմնազիայի դասընթացը, ցանկանում է դասեր ունենալ, կամ համապատասխան պարապմունքներ ունենալ գրասենեակներում։
Հասցէն՝ Բէբուտովսկայա փողոց № 41, վերին հարկ, հարցնել օրիորդին։
(հ.կ.) 1—2

Մի թշուառ ԸՆՏԱՆԻՔ, որը բաղկացած է 7 հոգուց, խնդրում է բարերարներից օգնութիւն հասցնել իրան։ Հասցէն՝ Михайловская ул. № 88. տիկ. Սալամբէգեանին։ 2—2

Թամաղեանց Ա.-ի գրքերը

1) Խուլ Խաչիկ, պատմ. վէպիկ	25 կ.
2) Սասունցի Յոհան, պատմ. վ.	30 կ.
3) Քաջ Աղասի, պատմ. վ.	25 կ.
4) Երկասիրութիւններ, ա. կապուկ	50 կ.
5) Գալօ Աֆօ և Խաչան	12 կ.
6) Աստուած չը ճանաչող	10 կ.
7) Ժամանակը ոսկի, պատկերազարդ	40 կ.
8) Ծովինար	20 կ.
9) Երկու աղբերացիդ	30 կ.
10) Անմեռ աշխարհ	8 կ.
11) Շէն թագաւորի աղջիկը	20 կ.
12) Աստուած աղքատի կերպում	20 կ.
13) Հէքիաթներ	30 կ.

Նոր լոյս տեսաւ՝
14) Սրտից 9 պատմ., պատկերազարդ. 40 կ.
Դիմել՝ Թիֆլիսի գրավաճառներին կամ հեղինակին՝ Ներսիսեան դպրանոց։
(հ. կ.) 3—10

Գեղրլու գիւղի (Էջմիածնի գաւ.) միդասեան ուսումնարանի համար հարկաւոր է մի փորձված ուսուցիչ, գերադասելի ճեմարանաւարտ կամ Ներսիսեան, ռոճիկ 400 ր., սենեակ վարձից ազատ.
Անդամ հոգաբարձութեան՝
Ս. Գասպարեան
Հասցէն՝ Ст. Сардаръ-Абадъ, Зак. Ж. Д., въ сел. Гечерлу, Папечителю Гечерлинскаго училища.

ԵՐԿՈՒ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ
Մաթեմատիկոս և պատմաբան
(Լազարեան ճեմարան աւարտած)
Ցանկանում են ուսուցչական պաշտօն ստանալ հայոց դպրոցներում։ (Ցանկալի է միևնոյն տեղում)։ Դիմել՝ Москва, Мал. Харитоновскій пер., д. Котова, кв. 10.
5—3

ՀԱՒԼԱԲԱՐԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ
եկեղեցու ծխական երկսեռ ուսումնարանը ԲԱՑՎՈՒՄ է սեպտեմբերի 1-ից. ընդունվում են 8—9 տարեկան տղայ և աղջիկ երեխաները։ Ընդունելութիւնը ՕԳՈՍՏՈՍԻ 15-ից սկսած նոյն օր, առաւօտեան ժամը 10—12-ը։
Հոգաբարձութիւն
3—3

Լոյս տեսաւ և վաճառվում է
ԵՄԻՆ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ՆՈՐ ՊԻԷՍԸ
ՍՈՒՐ եւ ՀՈՒՐ
(Ո՞վ է մեղաւոր)
Եպիզոդներ հինգ արար. եւ ապօթէօզ
1905 թ. հայ-թիւրքական ընդհարումներից
Արարուած I—Գիշատիչ թռչուններ. II—Դատապարտելի անհոգութիւն. III—«Ճէյթուն»-ի գործերից. IV—Մարմնացած թշնամութիւն (կանգնել է Իսլամը) և V—Ակն ընդ ական
Ապօթէօզ։
ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ
Միանուագ 10-ից աւելի կանխիկ վճարողներին—20%, 30ից—25% և 50-ից— զիջումն է լինելու։
Դիմել միմիայն հեղինակին այսպէս՝ Эривань, Эмину Теръ-Григорянцу.
(հ. կ.) 9—15

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային գնացքների երթևեկութիւնը)

(Ժամերը հաշված են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով)։

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ. 20 ր. գիշ.	4 ժ. 03 ր.
Թիֆլիս հասնելը	11 » 26 » »	5 ժ. 25 ր. առ.	1 ժ. 30 ր. գիշ.	9 ժ. 37 ր.
Թիֆլիսից դուրս գնալը	12 » 26 » »	6 ժ. 01 ր. առ.	—	—
Թիֆլիսի ժամանակով)	1 » 24 » »	6 ժ. 59 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 38 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 22 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 39 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 37 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 35 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 16 ր.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր.
Թիֆլիս հասնելը	5 » 06 » առ.	—	—	4 ժ. 49 ր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 12 » գիշ.	—	—	3 ժ. 25 ր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 10 » »	—	—	4 ժ. 23 ր.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	10 » 30 » առ.	—	—	2 ժ. 47 ր.
Երևան հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	6 ժ. 10 ր.
Կարս հասնելը	4 » 23 » »	—	—	8 ժ. 48 ր.

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Երկու սեռի անձանց համար
(Баку, уголъ Красноводск. и Меркурьевск. д. Набатовыхъ)
Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական եւ առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատ
Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա։
Ուսումն սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից մենայնօր կուրսերում առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից չև 7 ժամը։
Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (програм վում և ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են Баку, телю коммерческихъ курсовъ А. И. Те.ъ-Каспарову.
(ե. շ.) 11—30

Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցում
Վաճառվում են հետևեալ նոր գրքերը և նոր հրատարակութիւնները
Աբեղեան Մ., Աշխարհաբարի քերականութիւն 1906 թ. գ. 75 կ.։
Աղայեան Ղ., Ուսումն մայրենի լեզուի չորրորդ տարի 1906 թ. գ. 90 կ.։
Վանցեան Գր., Դպրոցական Քերականութիւն 1906 թ. գ. 25 կ.։
» Պատմական քերականութիւն Արևելահայ լեզուի 1906 թ. գ. 75 կ.։
» Հայ Հեղինակներ 2-րդ տպ. 1906 թ. գ. 25 կ.։
Տէր-Ղևոնդեան Ն., Մայրենի լեզու առ. տարի 32-րդ տիպ. 1906 թ. գ. 25 կ.։
» չորրորդ տարի 12-րդ տիպ. 1906 թ. գ. 55 կ.
» Մայրենի լեզուի քերականութիւն 6-րդ տիպ. 1906 թ. գ. 50 կ.։
Երզնկեան, Թուաբանական խնդիրներ և օրինակներ ա. և բ. տարվայ դասընթացի տպագրութիւն, գինն է 30 կ.։
Նոյն տեղը վաճառվում են վերոյիշեալ հեղինակների բոլոր միւս աշխատութիւնները, նոյնպէս հ. հ. Աղանեանի Սահակեանի, Արս. Բագրատունու, Եղնիկ Երզնկեանի, Յով. Մ տիրոսեանի. Գ. Տէր-Գաբրիէլեանի բոլոր աշխատութիւնները։ Գումարով խնդրողներին զիջ է լինում, Թիֆլիսից դուրս պահանջողներին ուղարկվում է և վերադիր վճարով, տուիրած գրքերի արժէքի ⅓-ը կանխիկ է ուղարկվում։
2—6
(հ. շ. ե.)

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Электропечатня, Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 5